Երրորդ տարի № 24 24 Յունիս 1884

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ ԿԻՒՐԱԿԵ ՕՐԵՐԸ

Տարեկան բաժանորդագինն է հինգ րուբլի: Բաժանորդագրութիւնն ընդունվում է «ԱՐՁԱԳԱՆՔԻ» խմբագրատանը և կենտրոնական Գրավաճառանոցում: Ծանրաքաշ ձրգումները պիտի լինի՝ Тифлисъ. Редакція „Арцаганкъ".

Առանձին համարները 10 կ. Յայտարարութիւնների բաւին 2 կ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հրաւէր Հայ ազգին: Ուսումնական մասնակցութիւնը ս. Էջմիածնայ կաթողիկոսների ընտրութեան խնդրում:—ՆԻՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ռուսաց ձեռնարկութիւնները: Ձեմարանի ուսուցչական խումբը: Ձեմարանի նորաւարտ սաները: Ագուլիսի վնասուածները: Նամակ Դերբէնդից: Նամակ Զարդախլուից: Նամակ Խմբագրին: «Եւս մէկ գոհ»: «Աղօթագիրք»: Գերմանիերէնից Հայ. բառգիրք: Իթալական ուս. Հայ աշակերտներ: I ար. գիմնազիայի Հայ աշակերտները:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Իշխան Բիսմարկը 1868 Թուին:—ՖԵԼԻԼԵՏՈՆ: Գիտութիւնը զօրութիւն է» Օգնեցաղութիւն:— ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒԲԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՀՐԱՒԷՐ ՀԱՅ ԱԶԳԻՆ

Այսօր ամենուրէք ցրուած հայերիս բարոյապէս ի մի կապողը Ս. Էջմիածնի Աթոռն է: Ոչ ոք կարող է ուրանալ մեր այդ հոգևոր կենաց կեդրոնատեղւոյ մեծ նշանակութիւնը Հայ ազգի համար: Դեռ հեթանոսական Հայաստանում քրիստոնէական լոյսը ծաւալուեցաւ Միածնի Ս. Իջման տեղից և այսօր, տասն և վեց դար անցած, հայ մարդը դարձեալ Ս. Էջմիածնից է սպասում իւր հոգեկան մխիթարութիւնը, իւր կրօնական ղեկավարութիւնը: Արիւնով գնած մեր սուրբ կրօնը պատմութեան մէջ սերտ կապուած է լիշեալ վանքի անուան հետ: Հեթանոսութեան և մահմետականութեան մէջ անսասան մնացած Լուսաւորչի այդ մեծ հիմնարկութիւնը սրբազան աւանդ է մնացած մեզ մեր հարց կողմից և քանի որ կայ աշխարհիս վերայ հայ ազգը իւր լոյս հաւատով, նա անխախտ և կանգուն պիտի մնայ մեզ համար: Ներկայ լուսաւոր ժամանակներում հայն անտարբեր չէ կարող լինել դէպի Ս. Էջմիածինը: Նա ամենայն իրաւամբ կը ցանկայ, որ Մայր Աթոռը արդարև իւր արժանավայել դիրքը ունենայ: Հայ ազգը կը բաղձայ, որ Աթոռի Հայրապետը, նման սրբոյ Գրիգորիսեանց և Ներսիսեանց, մեծագործ լինի—քայլ Հովուապետ, սլաշտպան եկեղեցւոյ, մեծ ուսուցիչ: Հայն կը սպասէ, որ Ս. Էջմիածինը համապատասխան լինի իւր վեմ Հոգևոր—կեդրոնացուցիչ նշանակութեանը: Այնտեղից կուզենք տեսնել բղխող այն միայնակ կենդանարար աղբիւրը, որ համայն ազգիս բարոյական և հոգևոր կրթութեան գործին պիտի նպաստէ: Մենք կը ցանկանք, որ վանքական միաբանութիւնը վերականգնեցնէ մեր գրականութեան ոսկեղէն դարը և ծաղկէ գիտութեան և ուսման: Մեզ սիրելի է ունենալ բանիբուն և քարոզիչ վարդապետներ: Մեր իղձն է, որ, վերջապէս, վերանան մեր միջից անուս, տգէտ քահանայք և փոխարէնն դոցա Հայ ազգի Հովիւները փայլին իրանց ուսմամբ:

Այս բոլոր պահանջները Հայ ազգը ամենայն իրաւամբ ուղղում է Ս. Էջմիածնին և այնտեղից է սպասում ազգիս արժանաւոր պաշտօնեայք: Դժբաղդաբար Մայր Աթոռի ներկայ նիւթական դրութիւնը անկարող է բաւականութիւն տալ մեր պահանջներին: Եւ ոչ միայն այսքան, այլ և պիտի աւելացնենք, որ այդ դրութիւնը միանգամայն աննախանձելի է: Յաւելով պիտի խոստովանինք, որ այս ցանկալի վայրին, Հայոց այս պանծալի Հոգևոր տունը այսօր զուրկ է արտաքին փայլից և մի խորն, ճնշող տպաւորութիւն է թողնում ջերմեռանդ ս յցելուի վերայ: Էջմիածնի Ս. Տաճարը, այս մեծահամբաւ պատմական կոթողը այժմ նսեմացած է անգութ ժամանակի ձեռքով: Նորա շինութիւնը անյետաձգելի վերանորոգութեան է կարօտ, իսկ վայելուչ վերանորոգութեան Համար մի նշանաւոր գումար է հարկաւոր, որ վանքը իւր միջոցներից հայթհայթել չէ կարող: Վանքից յետոյ այցելում էք Վեհարանը, այսինքն այն շինութիւնը, ուր բնակվում է ընդհանուր Հայոց կաթողիկոսը, ուր այցելում են ազգիս Հովուապետին թագաւորազունք և իշխանք, գիտնականք և Համբաւաւոր անձինք, մերայինք և օտար-

ազգիք։ Բայց որքան ամօթ։ Վեհարանի շինութիւնը ոչ միայն վեհ չէ, այլ և մի այնպիսի անշուք և անզարդ բնակարան է, ուր արժան չէ չորս հինգ միլիոն ազգի Դիտապետին ոտք անգամ դնել, ուր մնաց որ դա ևս կարևոր վերանորոգութեանց պէտք ունի։ Հրամայեցէք այնուհետև Վեհարանին կից եղող Էջմիածնի այն հռչակաւոր գրադարանը, որ հեռուից այնքան համբաւ ունէ ստացած Եւրոպացւոց աչքում։ Մի վախիք ուռած և ճաքճաքուած պատի տակով բարձրանալու մի նեղ սանդուխի վերայ. այդ պատը թէև, իրաւ է, մի օր պիտի փլչի, բայց ահա քանի տարի է որ լոկ խաբուսիկ սպառնալիքով անհանգստութիւն է պատճառում զգոյշ այցելուաց, որոնց գրադարանից ցած գալուց յետոյ, տեսուչը միշտ փութաք է տալիս Աստուծոյ թէ այս անգամ էլ անվտանգ պրծանք։ Եթէ երեկոյեան մի մեծ անձրև է եղել Վաղարշապատում, շտապեցէք այսօր մտնել գրադարանի նախընթաց դահլիճը, որ յատկացրած է գիտնական պարապմանց համար։ Մի ուշք դարձնէք ճաքուած պատերի վերայ և մի նայիք առաստաղի գոյն զգոյն անձրևից գոյացած նկարների վերայ, այլ հիացէք այն տեսարաններով, որ բաղդի բերմամբ պատրաստուել է այստեղ բնութեան և մարդու ձեռքով։ Ահա դահլիճի ճակատը զարդարում է մեծանուն Այվազովսկու քանի մի հազարներ արժեցող ծովատեսիլ մի նկար. որքան կենդանութիւն չուրց, որքան բնական . . . Բայց մի շտապ մօտենաք այդ տաղանդաւոր վրձինի պտուղին. նախ նայեցէք ձեր առաջ և ահա յատակի վերայ երեկոյեան անձրևից գոյացել է մի լիճ, որի երեսին փխրած, մավագոյն փոքրիկ ալիքները իրանց բնականութեամբ կասես թէ մաքառում են, հռչակաւոր նկարչի արհեստականի հետ . . .

Փութացէք, թողէք առանց հետազօտութեան հայ ազգի այդ հռչակաւոր գրադարանը, որի շէնքը իւր առաջին մուտքում այնքան վտանգաւոր է։ Վար իջէք և Վեհարանի սեփհական պարտիզի մօտով անցէք դէպի Ս. Էջմիածնի Սինօդը։ Մեր բարեկամական խորհուրդն է զգուշութեամբ մօտեցէք այդ երբեմն կամարակապ և սիւնազարդ շինութեանը։ Դա այսօր նմանութիւն է Գառնիի Տրդատայ գահի մնացորդներին և գուցէ կենդանի պատկեր է իւր ներքին բովանդակութեան։ Ելէք դուրս Վեհարանական բաժնից և հրամայեցէք միաբանութեան ձմեռուայ և ամառուայ հասարակաց ճաշարանները — սեղանատները, ուր հարիւր միաբանք, ժառանգաւորք և հիւրեր միասին սեղան են նստում թէ հասարակ և թէ տօն օրերում։ Ուշադրութիւն դարձրէք այդ համեստ ճաշեր վայելող միաբանութեան վերայ և մտաբերեցէք, թէ որքան հեռի է այդ սահմանափակ և խիստ — կրօնական աղքատիկ կեցութիւնը փոքր ի շատէ զարգացած կենցաղավարութիւնից, որի ճաշակի հետ ծանօթ չէ տակաւին Ս. Էջմիածնի վանքը։ Այցելեցէք այնուհետև արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց և ծայրագոյն վարդապետաց խուցերը։ Ըստ երևոյթին, որքան խեղճութիւն, անյարմարութիւն, անվայելչութիւն։ Չը գիտենք, ինչ կայ նոցա խոնաւ խրճթի ծածկուած սնդուկներում, գիտենք միայն որ նոցա բնակարանները թէ ձմեռը և թէ ամառուայ տեղիս տօթաթները եղանակներում անտանելի են փոքը ’ի շատէ յարմարութիւն փնտրող անձանց համար, թէև սոքա խստակրօնութեան լինելին դատապարտած իրանց անձը։

Որքան որ նախապաշարուած լինիք դէպի ս. Էջմիածնի այժմեան միաբանութիւնը, այնու ամենայնիւ ուշադիր եղէք, որ այդ տեղ հայ արքեպիսկոպոսն անգամ տալեկան 300 րուբլիից աւելի թոշակ չունէ։ Մի մտնէք արհիի խուցը, որոյ անշուք դրութիւնը շատ հրապուրիչ չէ, բայց ուշադրութիւն դարձրէք, թէ ինչպէս եպիսկոպոսներից սկսած մինչ ժառանգաւոր մոնթը ամէնքը տանջվում են ոսկրացաւից, որ յառաջ է եկել եկեղեցւոյ և բնակարանների խոնաւութիւնից։

Հիմայ հրամայեցէք դէպի Վաղարապատ, ուր սովորաբար իջնում են վանքի հիւրերը։ Որքան աղքատիկ, կիսախարխուլ և միանգամայն ազգային «Տանը» անվայել շինութիւն... Պէտք երևակայել թէ որպիսի տխուր տպաւորութեամբ է հեռանում Վաղարապատի մեջ հիւրասիրուած մերայինը և օտարազգին...

Ներկայումս Վաղարշապատ մտնող ճանապարհորդի ուշադրութիւնը գլխաւորապէս գրավում է Դէորգեան ճեմարանի շինութիւնը։ Շատերը ի հարկէ լսում են, թէ ինչպէս մի տասն և հինգ տարի առաջ ընդհանուր հայ ազգը բաղձանք էր յայտնում այդպիսի մի բարձրագոյն հիմնարկութիւն ունենալու։ «Մէ ոչխ, որ այչոթ կը չանկայ ի-ր հղեղեն ի- Էջմիածինը բարչը տեղեն մեջ տեսնել, անշո-շա օձանպահ հլկեն ինչ ի-ր փոխագը ’ի կոտոր ածելը-։ Այսպէս մտածեց հոգելոյս Դէորգ IV-ը և յոյսը ազգի վրայ դնելով, ձեռք տուեց գործին։ Արդարև զարմանալի էր, որ այդպիսի մի վսեմ ձգտում ծնեցաւ 60 տարեկան ծերունեայ մէջ, որ անձամբ ծանօթ չէ եղած ոչ մի համանման հիմնարկութեանց, բայց աւելի ևս զարմանալի եղաւ այն եռանդը, որ ցոյց տուեց մարմնական տկարութեան մէջ տոչորուող Քահանայապետը։ Վանքական գանձարանը անձուկ վիճակի մէջ գտնելով, հոգելոյս վեհը դիմեց ազգի օգնութեանը։ Ռուսիոյ հայք վեց-եօթը տարուայ մէջ քանի մի հարիւր հազար րուբլի հանգանակեցին, որից մօտ 250 հազարը ծախս եղաւ միմիայն ճեմարանի շինութեան վերայ։ Բայց բանական չէր միայն շինութիւն կառուցանելը. հարկ էր այդ հիմնարկութեանը իւր անուանը վայել ներքին փայլ տալ — որ նշանաւոր ծախսով միայն կարող էր կատարուել...։ Հարկ էր վերջապէս նիւթապէս ապահովացնել ճեմարանի յարատևութիւնը, առանց որոյ դա անկարող է ցանկալի յառաջադիմութիւն ցոյց տալ։ Չը նայելով հոգելոյս Դէորգի բոլոր չանքին, չը յաջողեցաւ նորան իւր այս վերջին ցանկութիւնը կատարուած տեսնել։ Նախա-

խնամուքիւնը վերջ դրեց նորա երկրաւոր կենաց, թողնելով և Գէորգեան ճեմարանը անապահով վիճակի մէջ։ Եւ ահա տարի ու կէս չանցած, այս տարիներով և դրերով երազած հիմնարկութիւնը նիւթականի պակասութեան պատճառաւ գուցէ ստիպուած լինի փակել իւր դռները ճիշդ այն միջոցին, երբ սկսել էր պտուղ տալ...

Այժմ Հայ ազգը չը տեսնուած եռանդով և ջերմեռանդութեամբ կատարեց իւր կաթողիկոսական ընտրութիւնը։

Ցանկալի և բաղձալի Հայրապետը, չորս հինգ միլիոնաւոր Հայ ազգի Հոգևոր Տէրը, պիտի գայ իւր Աթոռում բազմելու։

Նա պիտի աղօթէ իւր Հօտի փրկութեան համար այն պատմական Տաճարում, որի այժմեան անշուք դրութիւնը ամենևին համապատասխան չէ թէ իւր անցեալ փառաց և թէ ներկայ սերունդիս ինքնասիրութեանը... Ո՛րքան ամօթ։

Նա պիտի բնակի և նշանաւոր այցելուաց պատուասիրէ այն խարխուլ և տգեղ շինութեան մէջ, որ վեհարան է կոչվում։ Ո՛րքան ամօթ։

Նա պիտի իջնէ գատելու և վարձատրելու, հրամայելու և պատուիրելու այն աւերակ շէնքի մէջ, ուր զետեղուած է սինոդի տեսանը։ Ո՛րքան ամօթ։

Նա պիտի մտնէ գրադարանը անձամբ ծանօթանալու նախնեաց պատուական երկասիրութեանց հետ, բայց րոպէ րոպէ պիտի սպասէ պատի փլչելուն։ Ո՛րքան անյանախանձելի դրութիւն։

Նա պիտի չկարողանայ իւր շուրջը ժողովել և համախմբել ս. Էջմիածնի մէջ գիտնական և զարգացած կրօնաւոր և աշխարհական անձինք—նախ և առաջ չը կարողանալով տալ դոցա մի վայելուչ բնակարան։ Ո՛րքան ցաւալի բան։

Վերջապէս, նոյն իսկ Աթոռը մտած օրը Նա պիտի լսէ քանի մի հարիւր մանկանց լացը, որոնց համար ստիպուած պիտի լինի ձեմարանը գոցել իւր դռները միջոցները սպառելու պատճառաւ։ Ո՛րքան անտանելի դրութիւն։

Այսպիսի մի աննախանձելի վիճակ է սպառնում նորընտիր Ծայրագոյն Պատրիարքին և Կաթողիկոսին ամենայն Հայոց իւր Էջմիածին մտած օրը։

Էջմիածնի Տաճարը վերանորոգել պէտք է—վանքի գանձարանում դրամ չ'կայ. Վեհարանը և ս. Սինոդը շինել պէտք է—դարձեալ դրամ չ'կայ։ Գրատան ճաքճաքուած պատերը վերցնել պէտք է—նոյնպէս դրամ չ'կայ։ Միաբանութեանը պատշաճաւոր բնակարաններ տալ հարկ է—վանքը միջոց չունէ։ Այցելուաց և հիւրերի ընդունելու համար Ղազարապատը պէտք է վերանորոգել—յայտնի չէ թէ որ աղբիւրից։

Գէորգեան ճեմարանի գոյութիւնը, յարատևութիւնը և պայծառութիւնը. հինգ միլիոն հայ ազգի կարիքն է և պատուոյ խնդիրը—իսկ դորան ներկայումս նիւթական տագնապ է սպառնում։ Ի՞նչ կարող է անել այդպիսի դրութեան մէջ ազգիս բաղձալի Վեհափառ Կաթողիկոսը . . . ։

Ցոյս դնել ս. Էջմիածնի գանձարանի վերայ անկարող է նա, ով որ ի մօտոյ ծանօթ է Աթոռի սովորական եկամուտներին։ Ի հարկէ, կարելի էր այդ եկամուտներից շատերը բարգաւաճել, կարելի էր բարեկարգութեամբ և խնայողութեամբ առատացնել վանքական անձուկ գանձարանը—բայց այդ բոլորը երբէք չէ կարող հասնել այն աստիճանին, որ Աթոռը առանց արտաքին օգնութեան կարողանար բաւականութիւն տալ գէթ վերոյիշեալ անհրաժեշտ պահանջներին, ուր մնաց որ գոյանով չէ կարող բաւականանալ նորընտիր Հայրապետը։

ՌՈՒՍԻԱՅԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԱՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԽՆԴՐՈՒՄ *)

(Շարունակութիւն և վերջ)

Երևանի բերդում, որ պաշարուած էր ռուսաց զօրքերով, մեռաւ Դանիէլը։ Երկիւղ կրելով, մի գուցէ ս. Էջմիածնայ գահը նորանոր արկածների հանդիպէ, Դանիէլը, մեռնելուց առաջ, նամակ գրեց յանուն կայսեր և խնդրեց, որ երան յաջորդ նշանակէ Եփրեմին, որպէս զի ոա կարողանայ իսկոյն, իւր մահից յետոյ, կաթողիկոսական գահը բարձրանալ, առանց ժամանակի կորուստ ունենալու. կաթողիկոսը հաւատացնում էր կայսերը, որ բոլոր ազգի ցանկութիւնն էլ այդ է։ Նա կասկած չունէր, որ Եփրեմի ընտրութիւնը հաճելի կը լինի Ռուսիային։ Եփրեմը այդ միջոցին Ռուսաստանի Հայերի թեմական առաջնորդն էր և երկու կաթուղիկոսների մրցութեան ժամանակ անձամբ բացատրել էր կայսերը Դանիէլի ընտրութեան ապօրինի լինելը։ Դանիէլը իւր չաղթութիւնը պարտական էր նորան Եփրեմին, որ մեծ կապեր ունէր Ռուսիոյ դրան հետ։ Այսպիսով Եփրեմ արքեպիսկոպոսը կաթուղիկոսութեան յարմար էր համարվում թէ երան անձնական արժանիքներով և թէ որպէս բարեկամ Ռուսիոյ կայսերութեան։ Սակայն և այնպէս Պետերբուրգի արքունիքը երկիւղ կրելով, մի գուցէ նոյն սխալների մէջ ընկնի, ինչպէս Դաւիթ ընտրութեան ժամանակ, այժմ աւելի զգուշութեամբ սկսեց գործել։ Այս մասին կոմս Սալթիկովը գրում է գլխաւոր Հրամանատար կոմս Գուդովիչին «թագաւորը կանոն ընդունելով Հայոց կաթուղիկոսների ընտրութեան գործում ոչ թէ չ'ընդդիմադրել Հայոց ազգի ընդհանուր ցանկութեանը,

---

*) Տես «Արձագանք» № 23։

այլ չ՚ունէր իւր յարմարութիւնը՝ նորան, ցանկանում է միակ, որ Հայերի համաձայնութիւնը կաթուղիկոսի ընտրութեան ժամանակ պատճառ լինի նոցա մէջ խաղաղութեան և բարւոք կարգաւորութեան արգելատանալուն . . . Մեր դրծելի կապը պահանջում է, որ մենք ուշագրութիւն դարձնենք այն անձի ընտրութեանը, որ այդպիսի մի կարևորագոյն պաշտօնի համար է նշանակվում: Ռուսիոյ արքունիքը անշուշտ նախապատուութիւն պարտ է տալ այն թեկնածուին, որը ազգի ցանկութեամբ ընտրուելով, առաւել յատկանի է իւր հաւատարմութեամբ և ջերմեռանդութեամբ դէպի Ռուսիոյ շահերը . . . Եթէ վերայ հասնի Դանիէլի մահը, հարկ կը լինի ջանալ, որ նորա տեղը անմիջապէս նշանակուի մի անձն Ռուսաստանին անձնատուր, որպէս զի պարսիկները չ՚կարողանան օգուտ քաղել . . . „Այս ի նկատի ունենալով՝ կոմս Գուրովչին հրամանագրած էր, առանց բարձրագոյն թոյլտվութեան սպասելու, իսկոյն Դանիէլի մահից յետոյ, Թադաւորի անունով „կաթուղիկոսական տեղակալ“ նշանակել այն եպիսկոպոսներից մէկին, որին ինքը արժանաւոր կը համարէ, միայն որ „նա չինի Ռուսիային անյարմար և Հայոց ազգին եղ հաճելի“: Թոյլ էր տրւում մինչև անգամ նախկին-կաթուղիկոսին, Դաւթին, ի գահ հրաւիրել, եթէ միայն յայտ կունենայ, թէ „կարելի է նորան մեր կողմը ձգել“: Միով բանիւ կաթուղիկոս նշանակելու ընդրում՝ "Ռուսիոյ արտաքին օգուտը պէտք է հաշիւներ Հայոց ազգի յանձնառութեանցը հետ“:

Պատերազմը պարսից հետ դեռ ևս շարունակվում էր, երբ (1809 թ.) եկաւ կոմս Գուրովչին մօտ ս. էջմիածնից մի եպիսկոպոս, որ ներում էր վանքում կայացած ժողովի վճիռը: Էջմիածնայ ժողովը հանդուցեալ Դանիէլի տեղ ընտրել էր կաթուղիկոս Եփրեմին և այժմ պատգամաւոր եպիսկոպոսը խնդրում էր, որ կոմսը մնջնորդէ նորա հաստատման մասին: Գուրովչին էլ գրում է Պետերբուրգ. „Թագաւորի առատ ողորմութիւնը, որոնցով արդէն բարեբաստ է Եփրեմը, ամենահաստատ երաշխաւորութիւններ են, որ նա միշտ հաւատարիմ և որոեռանդն կը մնայ Ռուսիային և որ Եփրեմի ընտրութիւնը ոչքան համաձայն է Ռուսիայի շահերին, այնքան էլ հաճելի է այստեղի հայոց ազգին և հոգևորականներին: Այս պատճառներով կոմս Գուրովչին առաջարկում էր հաստատել Եփրեմին կաթուղիկոսական կոչման մէջ, այն պայմանով միայն, որ մինչև պարսկական պատերազմի վերջանալը նորան Թոյլ չ՚տալուի էջմիածին դնալ, մինչև Մայր Աթոռը ապահովուի պարսիկներից, այլ մնայ Թիֆլիսում, „որտեղից նա կարող է մեծ ազդեցութիւն ունենալ ժողովրդեան և հոգևորականութեան վերայ, որոնք գտնվում են Պարսկաստանում“: Եւ արդարև, թէև բարձրագոյն հրովարտակը Եփրեմի հաստատութեան մասին տրուեցաւ 13 սեպտեմբերի 1809 թ. բայց որովհետև պատերազմը շարունակվում էր պարսից և տաճկաց հետ, նորա էջմիածին մտնելն անհնարին էր համարվում դեռ ևս: Եփրեմը մնում էր Ռուսաստանում. նոկ այդ միջոցում Արտաշատեան հահանգում լուր տարածուեցաւ, որ նա չէ կամենում ընդունել կաթուղիկոսութիւնը, ուստի և կաթողիկոսական գահը մնում է դեռ ևս առանց գահակալի: Ջանքեր եղան մինչև անգամ նախկին կաթողիկոս Դաւթի կողմից իւր թեկնածութիւնն առաջ մղելու, բայց ժողովրդի կողմից համակրութիւն և պաշտպանութիւն չգտան:

Վերջապէս 1810 թ. յունիսի սկզբին Եփրեմ կաթողիկոսը հանդիսաւոր կերպով մուտ գործեց Թիֆլիս, բայց որովհետև պատերազմը դեռ ևս շարունակվում էր, այլ ևս չը կարողացաւ յառաջ գնալ: Սակայն պարսից Թագաժառանգ Աբբաս-Միրզան դրաւոր կերպով հաւատացրեց Եփրեմին, որ նա կարող է կատարելապէս վստահ լինել „չահի ողորմածութեան վերայ“, գալ և բազմիլ էջմիածնայ գահի վերայ, որպէս պատշաճաւոր ամենայն հայոց: Եփրեմը 1810 թ. նոյեմբերին ստացաւ դրեց Արտաշատեան հահանգը, ընդունուեցաւ պարսկիներից „հաճութեամբ և փառաւոր յարգանքով“ և նոյեմբերի 6-ին հանդիսաւոր կերպով օծուեցաւ էջմիածնում: Պարսից կառավարութիւնը մինչև անդամ 4,000 րուբլի թոշակ նշանակեց նորան, որ առաջ ամենևին պատահած բան չէր: Շահը հրամայեց նոյնպէս, որ փոխանակ մէկ երկվաբի, որ Թանգադրին տարեկան վարում էին կաթողիկոսի առաջը, ի նշան պատուոյ և յարգանաց, երկու երիվար տանեն այնու հետև: Բայց այս ամէնի հետ պարսից Թագաժառանգը հարկադրեց կաթողիկոսին և էջմիածնայ բոլոր միաբանութեանը, որ հաւատարմութեան ե դումն տան պարսից գահին և երդմնեն հաստատութեան համար ստորագրել այն աւետարանի վերայ, որ Աբբաս-Միրզան բերել էր իւր հետ:

Այս անսովոր պահանջը պարսից կողմից շատ կասկածանաց և տարակուսանաց տեղիք տուեց: Այս չէր բոլորը. կամենալով ամենայն բանում նմանուել ռուսներին՝ Պարսից կառավարութիւնը, որ այն ժամանակ ոչ մի չբանչան չունէր, այժմ չատկապէս Եփրեմ կաթուղիկոսի համար շինել տուեց մի պատուոյ նշան և մինչև այդ նշանն ստանալն արգելեց նորան գործածել ռուսաց պատուանշանները: Թագաժառանգ իշխանը, Աբբաս-Միրզան, գտաւնի հրամայել էլ պարսիկ իշխանաւորներին, որպէս զի առանց նոցա գիտութեան „Թքուչանն անգամ չ՚համարձակուի Թռչել Ռուսաստանի հողից դեպի էջմիածին, Եփրեմ կաթուղիկոսի մօտ“:

Կամենալով լուրջ հսկողութիւն ունենալ բոլոր գործերի վերայ, որոնք կատարվում են ս. էջմիածնում պարսիկ իշխանաւորներն ոչխան աւելի չարաչար այցելել կաթողիկոսին և վերջինս, ըստ արևելեան սովորութեան, հիւրասիրում և պարգևատրում էր նոցա Թանկագին ընծաներով: Ու որովհետև էջմիածնայ վանքը դեռ ևս պարսից նախընթաց պատերազմի ժամանակ աւարի էր առնուած, այդ պատճառով կաթուղիկոսն ստիպուած էր պարտքեր անել: Այս պարտքերը, որոնց համար ահագին տոկոսներ էին տրւում, 1820 թ. աճեց մինչ 320 հազար րուբլի: Աներես պարտապանները—զանազան Թուրք բէկեր և խաներ դիշեր և ցերեկ հանգիստ չէին տալիս էջմիածնին: Պարսից կառավարութիւնը ինքը դրդում էր նոցա և հեգնութեամբ ցոյց էր տալիս աղերսը, որտեղից կարող էին փող առնել և վճարել, այն է „Ռուսաց Թագաւորի, կաթուղիկոսի բարեկամի գրպանը“: Երևանի սարդարը առիթ չէր քաց Թողնում, որ չ՚խայթեր Եփրեմին, ռուսների բարեկամութեան համար: 1821 Թուին, մահմեդական „նովրուզ“ կոչուած տօնին, կաթուղիկոսն եկաւ տարբերին շնորհաւորելու, կուրծքին ունենալով ռուսաց շքանշանը: Սա կատաղացրեց սարդարին: Նա ամենքի ներկայութեամբ յայտնեց Եփրեմին, որ եթէ ոչ էլ անեմ եւ էլ հոմարչակաւ ներկայանաւ երես առաջց շանշանների, ապա դուն շանշանների ծապուճնիներով իլ խեղդուի“: Կաթուղիկոսն անկարող էր տանել այս օրինակ նախատինքը. 1822 թ. սկզբին նա առիթ գտաւ և անցաւ ռուս պարսկական սահմանագլուխը և մտաւ Շուշի: Այս քանը կրկնեցրեց Երմոլովին: Ցայտնի է, որ վերջինս մեզադրվում է Պետերբուրգում, իբր թէ միշտ առիթ է որոնում պատերազմ սկսելու պարսից հետ: Այժմ Երմոլով երկիւղ էր կրում, մի գուցէ պարսիկները մտածեն թէ նա ինքն է հրաւիրել կաթուղիկոսին ռուսաց հողը և թէ երևի այս արարքը մէջ „կաթեւոր մտադրութիւններ կան“: "Կատարելով կայսեր տրբը նմա-

քը, տեղեկագրում է Երմալովը Պետերբուրգ, և առիթ չեմ բաց թողնում, որպէս զի գրաւեմ Պարսկաստանի հաւատարմութիւնը և բարեկամութիւնը, մինչդեռ պատերազմի գալուստը կարող է պատճառ կառավարութեան կասկած յարուցանել մեր վարմունքի անկեղծութեան մասին", եւ վկայացեալ Ալէքսէյ Պետրովիչը (Երմ.) գտնում էր, որ Եփրեմը չունի հաստատամտութիւն և խելք և նորա ընդունակութիւնքը այնքան սահմանափակ են, որ մի այդպիսի մէջնակարգ վանքում անկարող է լինում յարգանք վաստակել": Բայց Եփրեմ կաթուղիկոսը անընդունակ մարդ չէր: Երմալովը խորհուրդ էր տալիս կաթուղիկոսին կամ վերադառնալ էջմիածին, կամ եթէ ծերութիւնը և ֆիզիքական թուլութիւնը չեն ներում նորան այդ բարձր պաշտօնի պարտականութիւնքը կատարել, ապա ըստ հրամանի կոմս Պասկևիչ-Էրիվանսկոյ և Պարսկաստանի համաձայնութեամբ անցնէ ռուսաց սահմանը, բայց ոչ պէս պարբերի, որովհետև պատրիարքի աթոռը պէտք է էջմիածնում լինի: „Երմալովի նախագիծը հաւանութիւն գտաւ Պետերբուրգում, որովհետև կարծում էին, թէ այդպիսով պարսից կառավարութեանը կը համոզեն, որ երանց կողմից" ոչ մի քաղաքականութիւն չեն դրած" կաթուղիկոսի հեռանալու վերաբերութեամբ:

Այս առաջարկութիւնը, հրաժարել կաթուղիկոսական կոչումից, չ'պարմացրեց Եփրեմին: Եօթանասունեօրեամեայ ծերունին լինքն էլ շատ անգամ էր մտածում այդ մասին, բայց Աթոռի ապագայ անպաշտպան կացութիւնը արգելք էր լինում նորան: Իսկ այս անգամ նա վճռեց պաշտօնազուրկ լինել, միայն այդ քայլն անելուց առաջ հրաւիրեց իւր մօտ Վրաստանի Հայոց առաջնորդ Ներսէս եպիսկոպոսին (որը յետոյ կաթուղիկոս եղաւ) և նորանից խորհուրդ հարցրեց: Ներսէսը հակառակ էր հրաժարուելուն և ապացուցանում էր թէ նա „կոչուած է ի գահ Հայրապետութեան ըստ կանոնի Հայաստանեայց եկեղեցւոյ մինչնորդութեամբ սուրբ օծման և ոչ թէ լոկ կոչմամբ, ուստի և բացառիկ իրաւունքները չունի մինչև ի մահ հրաժարիլ այդ պաշտօնից, առանց խաղտելու եկեղեցական կանոնները, առանց վնասելու պատրիարքական կոչմանը և առանց դառնապէս վրդովելու բոլոր ազգի զգացումները": Այսուամենայնիւ Եփրեմը հարկադրուած էր 1842 Թ. յունիսի 20-ին սաորագրել հրաժարման թղթին և ուղարկել Երմալովին, խնդրելով՝ որ իրան Թոյլ տան բնակութիւն հաստատել Հաղպատայ վանքում:

Սակայն Պարսկաստանը սորանով գոհ չ'մնաց: Այժմ շահի հրովարտակը հրամայում էր Երևանի սարդարին խստիւ արգելել էջմիածնի պարտատէրերին, որ չ'համաձակուին վանքի պարտքերը պահանջել: Միևնոյն ժամանակ Պարսկաստանը վճռապէս պահանջում էր պատրիարքի վերադարձը էջմիածին, „ուր նա առաջուանից աւելի յարգանք ու պատիւ կունենար": 1824 Թուի վերջերում եկաւ Երմալովի մօտ շահի պեսպանը և պահանջեց Եփրեմի վերադարձը: Երմալովը պատասխանեց, որ ինքն անկարող է ստիպել Եփրեմին վերադառնալ, որովհետև նա հրաժարուել է կաթուղիկոսական կոչումից: Պեսպանը պնդում էր: Հաստատ համոզուած լինելով, որ կաթուղիկոսի վերադարձը անհնարին է, Երմալովը խորհուրդ տուեց դեսպանին խօսել այդ խնդրի մասին Ներսէս արքեպիսկոպոսի հետ: Այս խօսակցութեան հետևանքի մասին Երմալովը գրում է. „զարմացմամբ լսացայ Ներսէս արքեպիսկոպոսից, որ սրբազնագոյն կաթուղիկոսը պատրաստ է զոհել իւր սեպհական հանգիստը Արարատեան աթոռի և բոլոր Հայ ազգի օգտին, եթէ միայն ես կարողանայի համոզել պարսից գահաժառանգ իշխանին իւր պաշտպանութեան տակ առնել էջմիածինը. այնուհետև նա պատրաստ է վերադառնալ այնտեղ, որովհետև իրաւունք չունի հրաժարել այն կոչումից, որ եկեղեցական օծմամբ յատկացրած է նորան",

Շահի գեսպանին յայտարարելով՝ որ եթէ կաթուղիկոսը կամենայ, արգելք չի լինել նորա էջմիածին վերադառնալուն, Երմալովը մինչդոյն ժամանակ նամակով դիմեց պարսից Թագաժառանգին և պահանջեց, որ նա շահի անունով վստահացնէ Ռուսիային Թէ պատրիարքին պատշաճապէս ընդունելու և Թէ էջմիածնայ վանքը Երևանի սարդարի իշխանութիւնից ազատ կացուցանելու մասին: Վերջինիս վարմունքը նկարագրելով՝ Երմալովը յիշեցրեց Թագաժառանգին, որ „հարստահարում է մի ազգ, որ հաւատով այնքան մօտիկ է լինՀ և ի դէմս նորա կաթուղիկոսի իմ կայսեր մեծութիւնն է վիրաւորանքի ենթարկվում Երևանի սարդարի զբաղուելի չանգգնութեամբ, որը համարձակուել է պատրիարքի երեսին ասել, Թէ երբ միանգամ ևս գայ նորա մօտ իմ Թագաւորի շքանշաններով, ապա կը հրամայէ կախել նորան նոցա ժապաւէններով":

Այդ միջոցին Երևանի սարդարն էլ գրում էր Երմալովին, որ եթէ Եփրեմ կաթուղիկոսը հրաժարի էջմիածնին գալուց „հայերը ի'ընտրեն ուրիշը և կը հաստատեն նորա տեղը": Երմալովը պատասխանում է սարդարին. „աւելորդ չէր լինիլ յիշեցնել ձեզ, որ Էրիվանի հոմսրել մեկին կախաւած է և Թիւս այլոց և իմ կայսեր կամքից, իսկ ընդհակառակն իրաւունքը պատկանում է բոլոր հայ ազգին և ոչ Թէ միայն Պարսկաստանում բնակուողներին»:

Շատ ժամանակ չանցած այս բոլորից՝ պարսիկները յարձակուեցան ռուսաց սահմանները. պատերազմն սկսուեցաւ: Երմալովին փոխարինեց Պասկևիչը: Պատրիարքը դեռ ևս Հաղպատումն էր, իսկ Ներսէս արքեպիսկոպոսը սուրբ և խաչը ձեռին առաջնորդում էր ռուսաց զօրքերը դէպի Արարատեան նահանգը: Յայտնի է, Թէ ինչ քաջութիւններ գործեց այս անվեհեր հայ հոգևորականը, ինչ պատուի և չքանշանների արժանացաւ ռուսաց կայսրից և վերջ ի վերջոյ, երբ ռուսները տիրեցին Արարատեան դաշտին, կայսեր հրամանով ս. էջմիածնից ուղարկուեցաւ Բեսարաբիայի Թեմը կառավարելու, ուր և մնաց 15 տարի:

Ներսէսին հեռացնելուց յետոյ՝ Պասկևիչը հրաւիրեց Եփրեմ կաթողիկոսին շտապել էջմիածին, ուր նորա լինելութիւնը կարևոր է ռուս կառավարութեան հայեացքներին և մտադրութիւններին ցօգուտ ազգին Հայոց: Միևնոյն ժամանակ կոմսը մինչնորդեց, որ այս արժանաւոր ծերունուն „պարգևատրեն ս. Ալէքսանդր Նեվսկու անդամանգեայ շքանշանով: Բայց հէնց որ տեղ հասաւ կաթուղիկոսը, իսկոյն զգաց հեռացրած Ներսէսի անմիջական օգնութեան կարև որութիւնը, որովհետև նա էր այն մեակ անձը, որ կարող էր կարգի բերել անկանոնութեան մատնուած եկեղեցական գործերը: Եփրեմ կաթուղիկոսը, առանց կոմս Պասկևիչի միջնորդութեան, շտապեց չանուն կայսեր մի խնդրագիր ուղարկել, որով խնդրում էր Թոյլ տալ Ներսէսին վերադառնալ էջմիածին և գրնել իւր տեղը, որովհետև ինքը ծերացած լինելով, իւր կենդանութեան ժամանակը կամենում է կաթուղիկոսական կառավարութեան պեկը յանձնել նորան:

Պասկևիչն էլ իւր կողմից խնդրագրել է տալիս 1836 պօլօժինեան, նոր կազմակերպութիւն տալով ս. էջմիածնայ միաբանական ուխտին և հաստատելով «Նօգը:

Ա. Ե.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Հիւսիսային գործակալութիւնը» յունիսի 21-ից հեռագրում է հետևեալը.

«Նովոե Վրեմիա» լրագիրը հաղորդում է որ այս օրերը կառավարութիւնը հաստատել է ռուսաց ծխական ուսումնարանների ծրագիրը երկամեայ և չորսամեայ դասընթացով. այդ ուսումնարանները կ'գտնուին հոգևոր վարչութեան իշխանութեան ներքոյ, իսկ ազգային լուսաւորութեան նախարարութեան վերահսկողներին (թեմական տեսուչները) տրուած է միայն իրաւունք յայտարարութիւններ անել ուսումնարանի կառավարչին կամ թեմական առաջնորդին»:

*
* *

Այս տարի ս. Էջմիածնայ Գէորգեան ճեմարանի ուսուցչական խմբի պայմանաժամը լրացած լինելով, ինչպէս տեղեկանում ենք, խումբը միակամ որոշել է մի տարի ևս մնալ, մինչև վեհափառ կաթուղիկոսի դալուստը և տարեկան ռոճկից զգալի զեղչ է արել: Ճեմարանի տեսուչը պակասացրել է իւր ռոճկից 1,500 ր., այնպէս որ այժմ պիտի ստանայ 3,500 րուբլի. աւագ ուսուցիչները պէտք է ստանան 2,400-ական րուբլի բացի պ. Սեդրակ Մանդինեանից, որը ստանում է 3,000 րուբլի և միակ ու մեզ համար անհասկանալի մի բացառութիւն է կազմում մեւնների համեմատութեամբ:

Այս տեղեկութիւնները մենք ստացել էինք արդէն, երբ տեղական լրագիրներում հրատարակուեցաւ ս. Էջմիածնից հետևեալ հեռագիրը, որին մենք դժուարանում ենք հաւատ ընծայել:

«Սինոդի նախագահ արքեպիսկոպոս Մկրտիչ Բաջամեանի պահանջման համաձայն՝ ճեմարանի տեսուչ Աբշակ Նահապետեանը տուեց իւր հրաժարականը: Աւելի քան թէ հաւանական է և մեւս ուսուցիչների հրաժարականը:

Ճեմարանի գոյութեամբը հետաքրքրուող միաբանութեան մի մասը տխրած է երկիւղից, որ մի գուցէ այդ հանգամանքը վատ հետևանքներ առաջ բերէ ճեմարանի համար»:

*
* *

Մենք լսում ենք, որ ճեմարանի ուսանողներից ութ հոգի, որոնք մեծ յաջողակութեամբ աւարտել են այս տարի իրանց ուսման ընթացքը, խնդիր են տուել Սինոդին և ցանկութիւն են յայտնել վարդապետանալու: Այդ լուրը ուրախութեամբ լցնում է մեր սիրտը. դա ապացոյց է, որ ճեմարանը, այդ առաջնակարգ հիմնարկութիւնը համապատասխան է իւր վսեմ կոչման. դա մի գեղեցիկ երաշխաւորութիւն է, որ այսուհետև մեր կուսակրօն հոգևորականութեան մէջ պարբերաբար սկիսկ մտնեն նոր հոսանքներ, թարմ և նախապատրաստուած ուժեր: Մենք հրապարակով շնորհաւորում ենք մեր անգրանիկ ուսանողների առաջին քայլը:

*
* *

Վերին Ագուլիսում մի մասնաժողով է կազմուել հեղեղից վնասուած ընտանիքներին օգնելու նպատակով: Այդ «Մասնաժողովը» ուղղել է մեզ հետևեալ նամակը:

14 յունիսի 1884 թ.

Պ. Խմբագիր.

Ձեզ և թէ ձեր ընթերցողներին հեռագիրներից և թղթակցութիւններից արդէն յայտնի է մայիսի 21-ին Վերին-Ագուլիսում պատահած հեղեղի—այդ իւր հետևանքներով սարսափելի աղէտի մասին:

Չկրկնելով այդ կորստաբեր պատահարի սրտաճմլիկ նկարագրութիւնը, պատահարի՝ որի ծանր հարուածներից այսպէս կամ այնպէս, այս կամ այն չափով ազատ չմնաց ոչ մի ագուլեցի, «Մասնաժողովս» ի դիմաց Ագուլիսի Հասարակութեան դիմում է ձեզդ յարգութեան, խնդրելով բանալ խմբագրութեանդ մէջ ստորագրութիւն Վ.-Ագուլիսում հեղեղից վնասուած աղքատ ընտանիքների օգտին:

Նախագահ՝ Գրիգոր Սիմէոնի Աղաբէկեանց

Անդամք՝ Ասատուր Ներսէսեանց, Խաչատուր Փանոսեանց, Ասերիս Մուսայելեանց, Բզնունի Մկրտչեանց

«Արձագանքի» խմբագրութիւնը կատարեալ պատրաստակամութիւն է յայտնում ընդունելու դրամական նուէրներ Մասնաժողովին հասցնելու համար:

*
* *

ՆԱՄԱԿ ԴԵՐԲԷՆԴԻՑ

14 յունիսի 1884 թ.

Պ. Խմբագիր.

Դերբէնդից առ Նորին Բարձր Սրբազնութիւնն Ներսէս պատրիարք, ուղղած հեռագիրն, որը տպուեցաւ պատուական Արձագանքիդ 21-ի համարում, այնտեղի հանդարտութեան զանազան առարկութեանց և տարակուսանաց տեղիք տուեց: Ջնայելով որ հանդարտութեան ստուար մեծամասնութեան անյայտ է այսպիսի մի հեռագիրը, չգիտենք ինչ չէց հետևցնելով, հեռագիրը անուանած է «բան ուշացած», այս բառերը շատերին տեղիք տուեց կասկածելու, որ

այդ հեռագիրը խարդախած է մի անհատ, յանուն Համայն Դերբէնդի Հասարակութեան, ուստի Դերբէնդի բոլոր Հասարակութեան համար շատ ցանկալի և հետաքրքիր կը լինէր, եթէ Լամբագրութիւնք բարեհաճէր, Աբձագանքի յետագայ Համարներից մէկում՝ բացորոշ պարզել այդ մութ խօսքերը, որով՝ մինչև տուած կը լինէր զանազան անվերջ խօսակցութեանց բառնալուն:

Դերբէնդի գրեթէ բոլոր Հասարակութիւնը հրաժարվում է լսեն վերագրելու այդպիսի մի բնաւորութիւն ունեցող հեռագիրը, զանելով »վերին աստիճանի անտեղի և պատիւ չ'բերող«:

Յ. Տ. Պ.

«Բուն ազգային» ածականը վերաբերում էր հեռագրի մէջ յայտնած մտքին:

Ը. Խ.

*
* *

ՆԱՄԱԿ ՁԱՐԴԱԽԼՈՒԻՑ

10 յունիսի 1884 Թ.

Մեծապատիւ Լամբագիր.

Անցեալ 83 Թ. մայիսի 8-ին պ. Առաքել Մանասեանցի Թոռան մկրտութեան խնջոյքին գիւղիս ուսուցիչ Ստեփաննոս Տէր-Միքայէլեանը մի քանի խօսքով ուսումնարանի շինութեան անյարմարութիւնները բացատրելով՝ ասաց. »Պարոնները, մենք մեր երեխաներին ուղարկում ենք ուսումնարան նոցա Հոգեկան աչքերը լուսաւորելու նպատակով. բայց ես սաստիկ վախենում եմ, թէ մեր ուսումնարանում Հոգեկան աչքերը լուսաւորելու փոխարէն՝ մարմնականն էլ կուրացնենք ու մեր անուշադրութեան պատճառաւ պատասխանատու մնանք մինչև մեր ծոցից որդուց առաջ, որովհետև նոցա նստեցնում ենք նեղ, ցած և մութ սենեակի մէջ, աշակերտի գլուքը որչափ և ընչպէս Հարկաւոր է, չէ լուսաւորվում. մթութիւնից աչքացաւի դէպքեր կան արդէն« և այլն և այլն և, ծոցից Հանելով պատրաստի մատեան, առաջարկեց Հանգանակութեամբ նպաստել նոր շինութեան: Սեղանի վերայ ստորագրած գումարը Հասաւ 162 մանէթի: Հրապարակական շնորհակալութիւնս մատուցանելով նուիրատու պարոններին, խնդրում ենք տպագրել մեր Թերթի մէջ նոցա անունները՝ ի գիտութիւն ստորագրողաց և՝ ի խրախուսութիւն այլ բարեսիրաց: Ահա նոքա. 8 մայիսի պ. պ. Յովհաննէս Առաքելեան Մանասեանց 25 ր., Խաչատուր Ղարախանեանց 25 ր., Յովսէփ Մարգարեանց 10 ր., Յակովբ Եգանեանց 5 ր., Եաւրի Քօչարեանց 5 ր., Ստեփանոս Տէր-Միքայէլեան, 5 ր., Պօղոս Բաբաջանեանց 10 ր., Վարդան Մարգարեանց 10 ր., Յովակիմ Մանասեանց 10 ր., Պօղոս Եգանեանց 5 ր., Գրիգոր Տէր-Մակարեանց 5 ր., Յարութիւն Գաբրիէլեանց 10 ր., Գրիգոր Մանասեանց 25 ր., Ռափայէլ Յարութիւնեանց 3 ր. Վարդապար Պօղոսեանց 2 ր., Մամմադ բէգ Մաղբալեւ 3 ր., Նիկողայոս Մամիկոնեանց 3 ր., Ղահրաման Սահակեան 1 ր., 9 մայիսի պ. պ. Յակովբ Յարութիւնեանց 5 ր., Իվան Մարգարեանց 5 ր., Ներսէս Ազուամանեանց 3 ր., Մատի Մաթիոսեան 1 ր., Հայրապետ Յովսէփեան 2 ր., Աւագ Այվազեանց 3 ր., Խաչատուր Եգանեանց 1 ր., Սարգիս Պապիեանց 2 ր., Յովհաննէս Յարութիւնեանց 1 ր., Պետրոս Յովսէփեանց 1., Առաքել Գրիգորեանց 1 ր., Գրիգոր Սարգսեանց 2 ր., Սահակ Սիմոնեան 3 ր., Պետրոս Գէորգեանց 2 ր., Սարգիս Յակոբեան 2 ր., Ազաջան Գասպարեան 2 ր., Յարութիւն Ազաբէգեանց 1 ր.: Յունիսին պ. Յովհաննէս Մանասեանցի առաջարկութեամբ ստորագրել են Թիֆլիսեցիք պ. պ. Միքայէլ Գր. Վարդանեանց 3 ր., Բաղչի Եղիազարեանց 5 ր., Աւետիք Տէր-Աբրահամեանց 2 ր., Սիմէոն Մարուքեանց 3 ր., Նարիմանեանց 3 ր., և Պաւլ Մելվելեանց 2 ր., գումարը 18 ր.: Հետևեալ ամիսներում Տէր-Միքայէլեանի առաջարկութեամբ գիւղումս ստորագրել են պ. պ. Մկրտիչ Սարգսեան 1 ր., Խաչատուր և տիկին Հռիփսիմէ Խաչատրեանք 5 ր., Մատթէոս Խաչատրեան 2 ր., Խաչատուր Ազամեանց 2 ր., Աւետիք Առաքելեանց 2 ր., Գեղաքէդում. Մեծ. պ. Ղահրաման Ս. Յովհաննիսեանց 3 ր., Գանձակում Մեծ. պ. պ. Ներսէս Տէր-Ներսէսեանց 5 ր., Մարտիրոս Նաբաթեանց 2 ր. և Թիֆլիսում Մեծ. պ. Աբգար Յովհաննիսեան 5 ր.: Ընդամէնը 244 ր. է ստորագրած մինչև սեպտեմբեր. այնուհետև դրամական տագնապի պատճառաւ ստորագրութիւնը դադարեց: Նուիրատուների տետրակը այժմ քժշկապետ պ. Իվան Քրիստափորովիչ Մարգարեանցի մօտն է. յուսով ենք որ մեծ. պարոնը 'ի սէր իւր Հայրենակից ուսումնասիրաց մանկանց իւր աջակցութիւնը և օժանդակութիւնը չի ղլանայ այս գործին:

Խնդրում ենք բարեսէր ազգայնոց նուիրատուութեամբ օգնել մեզ այս գործն առաջ տանելու, 'ի սէր ազգային լուսաւորութեան:

Հոգաբարձու ուսումնարանի՝ Մելոք Խաչատուր Տէր-Սթեփաննոսեան

*
* *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Անցեալ մայիսի 21-ին Հայ դերասանական խումբը՝ կարգադրութեամբ պ. Գ. Զմշկեանի, տուեց Թատրոնական մի ներկայացումն, որի արդիւնքի կէսը յատկացրած էր Հաւլաբարու ս. Մարիամեան Հայ օրիորդական ուսումնարանին:

Այս ներկայացման ընդհանուր մուտքն էր՝ 584 ր. 80 կ.

Թատրոնի վարձ և ուրիշ մանր ծախքեր՝ 218 4

դուտ արդիւնք՝ 366 76

որից մինչև այժմ մնում է ապառիկ պանազան անձանց վերայ՝ 24 50

Առ ձեռն պատրաստ գումարի կէսը, այն է 171 ր. 13 կ. յանձնուեցաւ պ. Զմշկեանի ձեռքով դերասանական խմբին և նոյնքան էլ պատկանում է ուսումնարանին:

Բացի այս՝ չխնայեց ներկայացման առիթով յօգուտ ուսումնարանի ստացուեցաւ նպաստ հետևեալ անձինքներից՝ Տ. տ. Ս. Թամամշեանից 2 ր., Կ. Խալաթեանից 2 ր., Շ. Մուրինեանից 10 ր. և Պ. պ. Քազազքաղլուխ Ա. Մատինեանից 5 ր., Ղ. Հախնազարեանից 1 ր. Մ. Շահ-Պարոնեանից 3 ր., Ա. Մանդինեանից 3 ր., Մ. Սալամբէգեանից 8 ր., Տ. Նազարեանից 2 ր., Իշխան Ն. Արղութեանից 1 ր. և Պ. Սիմէոնեանից 1 ր. ընդամէնը 38 ր., որ վերոյիշեալ 171 ր. 13 կ. հետ անում է 209 ր. 13 կ. որև լիովին ներկայացրած է ուսումնարանի Վարչութեանը հանդերձ ապառիկների ցուցակով:

Հրատարակելով այս հաշիւը, քաղցը պարտք եմ համարում յայտնել իմ խարին շնորհակալութիւնը Թէ դերասանական խմբին և Թէ յատկապէս պ. Ա. Մանդինեանին, որ մասնակցեց խաղին առանց որև է ակնկալութեան:

Ուսումնարանի խնամակալ՝ Գաբրիէլ Սունդուկեանց:

15 Յունիսի 1884 Թ.
Թիֆլիզ:

*
* *

Խմբագրութեան մէջ ստացուեցաւ պ. Գաբրիէլ Սունդուկեանի մի աշխատասիրութիւնը, որ նոր հրատարակուեցաւ, թէև վաղուց գոյութիւն ունէր ըեմի վերայ։ — „Էլի մէկ գոհը“ 1870 թուականից մեր թատրոնի դեղեցիկ գրքերից մինն է եղած. մենք, ի հարկէ, շատ անգամ առիթ ենք ունեցել տեսնել և լսել նորան. այսու ամենայնիւ տպագրուած և մեր ձեռքը հասած օրինակը մենք մեծ բաւականութեամբ կարդացինք և բաւական վսեմախած ու մշակած գտանք։ Չ'խօսելով տպագրութեան արտաքին մաքրութեան մասին, որովհետև դա պ. Սունդուկեանի հրատարակութեանց անբաժան սեպհականութիւնն է, մենք նոյն իսկ լեզուն շատ կանոնաւորած ենք գտնում։

*
* *

Խմբագրութեան մէջ ստացուեցաւ և մի ուրիշ ընտիր աշխատութիւն. „Աղօթագիրք ըստ ժամակարգութեան Հայաստանեայց ս. եկեղեցւոյ պարզաբանեալ ի Տէր-Յովհաննէս քահանայէ Մկրեան։ Հրատարակեալ ի Տէր-Յովհաննէս քահանայէ Մկրեան։ Հրատարակեալ Տ. Ներսէսի ս. պատրիարքի Կ. Պոլսոյ և հաճութեամբ կրօնաւորին ստեղնի“։ Թերթելով այդ աշխատութիւնը, մենք ամենայն վստահութեամբ կարող ենք ասել, որ արդարև Հայոց եկեղեցական դրականութիւնը մի ընտիր վաստակով հարստացաւ։ Մենք կարեւոր ենք համարում խօսել այդ „Աղօթագրքի“ մասին, առայժմ չկարենալով միայն, որ սա պէտք է ամեն մի հայ-քրիստոնեի անհրաժեշտ սեփհականութիւններից մինը համարուի թէ տանը և թէ եկեղեցում, մանաւանդ եթէ եկեղեցին այն բարոյական—կրթողական նշանակութիւնը պէտք է ստանայ, որից նա վերջին ժամանակներս զգալի կերպիս չեղուած է երևում մեզ։

*
* *

Վերջերս Մխիթարեան ուխտի միաբան Հայր Աւետիք վ. Կոչեւեան կազմել է „Գերմաներէն Հայերէն բառգիրք“, որի առաջին տետրը արդէն հրատարակուած է, երկրորդն էլ մամուլի տակ։ Առաջին տետրից դատելով, Հ. Կոչեւեանի գործը մի ընտիր և չափազանց գործ է և շատ պիտի նպաստէ գերմաներէն լեզուն սովորող և գիտցող Հայ ուսանողներին և բանասէրներին։ Առաջին տետրի տիպը մաքուր է, գիրքը չափսով և բաղկացած է 160 երեսից։ Բաժանորդագրութեան գինն է 1 րուբլի իւրաքանչիւր տետրի համար. Թիֆլիսում առանձին տետրակները վաճառւում են 1 ր. 25 կ.

Այսպէս ահա մենք ունինք ընտիր բառարան Ֆրանսերէն լեզուի պ. Նորայրի, գերմաներէն լեզուի Հ. Կոչեւեանի. բայց չունինք և երևի շուտով չ'պիտի ունենանք մի չափազանց բառարան ռուսերէն լեզուի։ Սա ի հարկէ պատիւ չէ կարող բերել Ռուսաստանի բազմաթիւ Հայ ռուսագէտների աշխատասիրական համբաւին։

*
* *

Այս տարի բժշկական ուսումնարանի եօթերորդ լրացուցիչ դասատանից հասունութեան վկայական ստացան 19 հոգի, որոնցից 12 հայ են, 5 ռուս, 1 Թուշ, 1 Թուրք. հայերը սոքա են՝

1) Գիւզալեան Տիգրան, 2) Ղարախանեան Գրիգոր, 3) Մխիթարեան Յովհաննէս, 4) Նաւասարեան Յովհաննէս, 5) Սարգսեան Միքայէլ, 6) Թադէոսեան Աբշակ, 7) Տէր-Միքայէլեան Հայկ, 8) Տէր-Յովհաննէսեան Վարդկէս, 9) Տէր-Ստեփանեան Աբշակ, 10) Զիլինգիրեանց Պօղոս, 11) Շահբազեանց Սիմէոն, 12) Իւզբաշեան Կոստանդին։

Ստացան ատեստատ 6-րդ դասատանից 34 հոգի, որոնցից՝ 17 Հայ են, 12 ռուս, 3 վրացի, 1 Թուշ և 1 Թուրք.

Հայերը սոքա են՝ 1) Յակոբջանեան Թադէոս, 2) Յակոբջանեան Տիգրան, 3) Անանեան Աբգար, 4) Արղուանենկի Կոստանտին, 5) Բէհբուդեան Վասիլ, 6) Բէհբուդեան Վլադիմիր, 7) Դանիէլբէկեան Գաբրիէլ, 8) Կաֆեան Գաբրիէլ, 9) Գեանջունցեան Հայկ, 10) Մանուչարեան Գաւիթ, 11) Փրիդոնեան Մինասեան, 12) Խանդամիրեան Տիգրան, 13) Շահվերդեան Ստեփան, 14) Շահազիզեան Ներսէս, 15) Շահդինարեան Վասիլի, 16) Շահնազարեան Աբշակ, 17) Շահմուրադեան Ադէքսանդր։

*
* *

Թիֆլիսի I արական գիմնազիոնի 8 դասարանից ատեստել են 35 հոգի, որոնցից 13 ռուս, 8 հայ, 6 վրացի, 4 լեհացի, 1 յոյն, 1 հրէայ։ Հայերն են՝

1. Ասրիբէգեան Ադէքսանդր, 2. Գաւթեան Գրիգոր, 3. Զաշտեան Ադէքսանդր, 4. Ենգիբարեան Գարեգին, 5. Բաղանթարեան Արամ, 6. Լիսիցեան Ստեփան, 7. Տէր-Գէորգեան Նիկողայոս, 8. Թատուրեան Սարգիս։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՇԽԱՆ ԲԻՍՄԱՐԿԸ 1868 ԹՈՒԻՆ

Նորերումս լոյս տեսաւ իրաւագէտ Բլունչլիի մի գիրք, որ կրում է «Denkwürdiges aus meinem Lebén» (Յիշատակելու արժանի անցքեր իմ կեանքից) վերնագիրը։ Ի մէջի այլոց Բլունչլին նկարագրում է այն տեսակցութիւնը որ ունեցել է 1868 թ. իշխ. Բիսմարկի հետ։

Ապրիլի 30-ին 1868 թ։ Այսօր նամակով դարձայ Բիսմարկին խնդրելով ինձ տեսակցութիւն նշանակել։ Նա անմիջապէս պատասխանեց ինձ, որոշելով այսօրուայ երեկոյն։ Խօսակցութիւնը տևեց 9 ժամից մինչև $10^1/_2$։ Մեծ յարմարութեամբ տեղակուեցանք նորա առանձնասենեակում, առաջս դրուած էր գարեջրով լի բաժակ, բերանում սիգար։ Այն ինչ որ մենք խօսեցանք ես անմիջապէս նշանակեցի երբ մեկնեցայ իշխանից։

Զրոյցը նախ ներքին գործերի մասին էր, յետոյ անցանք աւելի վսեմ խնդիրների քննութեան։ Բիսմարկը ասաց. «Դուցէ ձեր աչքում ես ցնորքներ պաշտող երևիմ, եթէ ասեմ որ աշխարհիս ազգերի մէջ, ինչպէս ընդհանրապէս բնութեան մէջ, կան «արական» և «իգական» սեռի ազգեր։ Գերմանացիք—արական սեռի ազգ են։ Նոքա այն աստիճան ուժեղ և քաջ են, որ նոցա կառավարելը անկարելի է, իրաքանչիւրը նոցանից աւելի

կեանքով է ապրում։ Միասին առնուած նոքա նմանում են հեղեղի, որ իւր հոսանքում ամէն ինչ խորտակում է և որի առաջն ոչինչ չէ կարող առնել։ Գերմանացոց երևալուն պէս, սկսուեցաւ պետութիւնների կազմակերպութիւնը։ Վեստֆալները և շվաբերը — բուն գերմանացիք են. նոցա մէջ շատ քիչ խառն արիւն կայ, այս է պատճառը որ նոքա անընկճելի են պետութեան առաջ։ Իսկ եթէ ազգային զգացմունքը ոգևորէ նոցա կարող են լեռները շարժել։ Պրուսիան մի ուժեղ խառնուրդ է ներկայացնում գերմանական և սլավօնական տարրերի։ Այստեղից ահա առաջանում է գերմանացիների պետական պիտանիութիւնը (staatleche Brauchbarkeit).

Այս նիւթի մասին նորից փոքր ինչ խօսելուց յետոյ իշխ. Բիսմարկն ասաց «Ֆրանսիայի երկիւղը երբէք չի արգելել իմ այն ձգտումները, որոնց նպատակը Գերմանիայի բարօրութիւնն է։ Ես Ֆրանսիայից չեմ երկնչում։ Մենք Ֆրանսիացիներից շատ աւելի զօրեղ ենք, մենք աւելի ուժեղ էինք արդէն անցեալ տարի։ Ես այդ ասում եմ ոչ պածենկոտութեան զգացմունքից դրդուած, որ ինձ բոլորովին խորթ է. մենք լաւ ենք խորհել խնդրի մասին. մեր բոլոր գեներալները նոյն կարծիքն ունին։ Ի հարկէ Ֆրանսիացիք յանկարծակի յարձակմամբ կարող են հասնել մինչև Մայնց և Կօբլէնց, բայց այդ կլինի — բոլորը, և այնուհետև այնպիսի արևելքի կ'հանդիպեն, որին խորտակելը նոցա ոյժից բարձր կլինի։ Յարձակողական շարժման համար նոքա 300,000 մարդուց աւելի չունին և բոլոր վճռողական կէտերի վերայ մենք կարող ենք զինուորների աւելի գերազանց քանակութիւն դէմ դնել։ Վերջին պատերազմում (1866-ին) մենք 640,000 մարդ ունէինք, բացի բէզերվը։ Եթէ հարկը պահանջէ բոլոր այր մարդիկը մինչև 36 ամեայ հասակը կերթան Ֆրանսիացոց դէմ։ Մի՛ևնոյնը չէ — իւր գերդաստանը, տունը պահպանել և դրացի երկրի վերայ յարձակուել։

Անկարելի չէ որ Ֆրանսիացիք յանպատրաստից յարձակուին հարաւի վերայ։ Ես չեմ կարծում որ այդ պատահէ, բայց և այդ հանգամանքում խորհուրդ կտայի՝ թոյլ տուէք Ֆրանսիացոց վեր առնել այն ինչ որ կարող են, բայց աւելի ոչինչ մի տաք նոցա։ Ամենավատը ինչ որ կարող է պատահել, այն է — որ դուք կ'զրկուէք մի քանի վայրերից և մարդկային կեանքերից, բայց վերջ ի վերջոյ դուք յաղթող կ'հանդիսանաք և առատութեամբ կ'վարձատրէք ձեր կորուստները։ Մի գերմանացի արժէ մի Ֆրանսիացու, իսկ քանակութեան առաւելութիւնը մեր կողմն է։ Եթէ Աստուած մեր դէմ չի լինիլ մենք կ'ընդդիմադրենք ամէն Ֆրանսիական յարձակման և յաղթութիւնից յետոյ կերթանք Փարիզի վերայ։ Նապօլէօնը գիտէ, որ մենք զօրեղ ենք և այս իսկ պատճառով խաղաղութիւնը չի խանգարուիլ։ Ես յոյս եմ դնում այդ քանի վերայ։ Գերմանական ազգը, եթէ նորա զինուորական ոյժերը միացուին, — աշխարհիս ամենաուժեղ ազգն է և ոչոքից չպետքէ երկիւղ կրէ։

Աւստրիան ամենայն դէպքում չեզօք կ'մնայ։ Եթէ և նորա դրամական դրութիւնը մի կողմ թողնելու լինէինք, նա դարձեալ պատերազմի մասնակից չի լինիլ. իւր բոլոր շահերի դէմ կլինէր այդ։ Աւստրիական գերմանացիք հասկանում են, որ այն պատերազմը, որի հետևանքը բարելաջող կլինէր Աւստրիայի համար, կզրկէ նոցա այն յաղթութիւններից, որ նոքա արել են պետութեան մէջ»։

Նոյն մտքով խօսել է Բիսմարկը և Հունգարիայի մասին։

«Մեր յարաբերութիւնները Անգլիայի հետ գերազանց են. անգլիացիք առաջ հիմնվում էին Աւստրիայի վերայ այն պատճառով, որ նոքա այդ դաշնակցութեան մէջ ապահովութիւն էին տեսնում Ֆրանսիայի դէմ և Աւստրիան համարում էին տիրապետող պետութիւն Գերմանիայի մէջ։ 1866 թուից յետոյ նոքա իբրև գործնական մարդիկ, փոխեցին խաղը։ Նոքա ընդդէմ չեն Գերմանիայի ազգային վերածնութեան. այդ մինչև անգամ ձեռնտու է նոցա։

«Ինչ կ'վերաբերէ Իտալիային, մեր թագաժառանգը այնտեղ մեծ ընդունելութիւն գտաւ։ Թագաւորը այն պատճառով ուզարկեց նորան, որովհետև համոզուած էր որ մեծ ոգևորութեամբ կ'ընդունուի։ Մենք ուզեցանք որ նախարարութեան ղեկը Լամոռ-մօրալի ձեռքը չանցնէ և այս տեսակէտից թագաժառանգի այցելութիւնը ունեցաւ իւր ներգործութիւնը։ Այսուհետև Իտալիայում անկարելի է մի այնպիսի նախարարութիւն, որ մեր վերաբերութեամբ թշնամական դիրք բռնէր։

«Դուք տեսնում էք, որ մենք մեր ոյժերի վերայ վստահ կարող ենք լինիլ։ Այս պատճառով մենք խաղաղութեամբ կաշխատենք Գերմանիայի զարգացման համար։

«Վիլհելմ թագաւորը, հաւատարիմ Հօհենցօլերների աւանդութեան, խիստ պարտաճանաչ է դէպի պետութիւնը։ Նա ամբողջ օր աշխատում է և հրամայում է զեկուցանել իրան բոլոր գործքերի մասին։ Ինձ շատ անգամ պատահել է, կարևորագոյն դէպքերում, զարթացնել նորան դիշերը և ներկայացնել նորան անկողնի մէջ մի քանի թղթեր ստորագրութեան համար։ Օրինակ թագաւորին ոչինչ այնքան հաճելի չէ, որքան զինուորական հանդէսներին ներկայ լինելու։ Ես համոզուած եմ, որ եթէ դառնայի նորան մի որ և է կարևոր գործով այն րոպէին երբ ձի պէտք է հեծնէ, որպէս զի մի նոր զօրագունդ աչքի անցնէ և վարժութիւնները անել տայ, նա ի հարկէ դժգոհութիւն կ'զգար որ խանգարում են իրեն, բայց և այնպէս կ'լսէր զեկուցումս։ Նա զինուորական կրթութիւն է ստացել և չէր կարծում որ կ'թագաւորէ։ Բայց գահ բարձրանալու օրից նա սկսեց աշխատել և իւր կեանքում շատ է կարդացել, շատ է մըտածել»։

ՓԻԼԻՍՏՈՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՁՕՐՈՒԹԻՒՆ Է

Որպէս զի այդ սկզբունքը ակնյայտնի լինի՝ Թող առնեն մէկը Համեմատէ Եւրոպան և Ամերիկան Ասիային և Աֆրիկային հետ. կամ Եւրոպայում համեմատէ ամենաուսուցեալ տէրութիւնները մէս՝ համեմատաբար՝ նաւաբեկ տէրութեանց հետ. կամ՝ աւելի դիւրին՝ լուսաւորեալ մարդուն սրդէին հետ: Անտարակոյս այդ համեմատութիւններից յետոյ՝ կ'տեսնուի՝ որ արդարև գիտութիւնը զօրութիւն է և մեծ և ճիշտ ասել մեր պատմաբան Եղիշէն՝ „լաւ է լինել կոյր աչօք քան մտօք“: Ազգերից ով սք չէ ընդունել գիտութեան կարեւորութիւնը՝ շատ շուտ պիտի չարաչար պատժվի. եթէ այսօր նա հարուստ է, վաղն պիտի տնանկանայ. եթէ այսօր նա ունի զօրութիւն վաղն պիտի զրկուի այդ զօրութիւնից. եթէ այսօր նա համարվում է առանձին ազգ և ունի իւր առանձնայատկութիւնները՝ վաղն պիտի կորցնի այդ և ձուլուի աւելի մտաւոր ոյժ ունեցող ազգերի հետ. մնով բանիւ՝ այժմեան դարում՝ երբ հաղորդակցութիւնները՝ շնորհիւ երկաթուղեաց, շոգենաւաց և հեռադրական գիծերի, այնքան դիւրացել են, նոցա նիւթական և հոգեկան կեանքը ամենամօտ չարաբերութեան մէջ է՝ ասել է թէ ազգերը սկսել են մի տեսակ մրցումն մխնանց հետ: Անտարակոյս՝ այդ մրցման մէջ նոքա՝ որոնք զուրկ են մտաւոր ոյժից՝ մանաւանդ եթէ զուրկ են քաղաքական կեանքից՝ անշուշտ պէտք է թուլանան. իսկ եթէ կուլտուրական կուիւը սաստիկ լինի և երկարատև, գուցէ և անյետանան՝ ինչպէս առանձին ազգութիւնը: Պատմութիւնը այս եզրակացութիւնը հաստատելու վիստեր շատ ունի բերելու: Ոչ ոք չի կարող մեզ հետ չը համաձայնվել որ եթէ Տաճկաց ազգը գիտութիւնից իրան հեռու չ'պահէը և եթէ նորա անթիւ սատրապեալ ազգերն աւելի զարգացած չ'լինէին՝ նոքա չէին կարող ցայժմ պահպանել իրանց առանձնայատկութիւնները և ստանալ անկախութիւնը՝ ինչպէս ստացել են շատերը՝ և հէնց գիտութեան ամենաանեծ կարևորութիւն չհասկանալն է պատճառը, որ Տաճկաց տէրութիւնը, որից երբեմն սարսափում էր ամբողջ Եւրոպան, երբ փիզիքական կոպիտ զօրութիւն էր դեր խաղում, այժմեան հոգեվարք դրութեան մէջ չէը լինել: Մ[illegible]թէ մտաւոր ոյժի զօրութեամբ չէ, որ փոքր Անգլիացւոց ազգը աշխարհիս համարեա $^1/_3$ մասին տիրում է. մ[illegible]թէ այդ դիւթական ոյժի շնորհիւ չէ՝ որ փոքր Պաղպեացւոց ազգը մի քանի հազար զօրքով Զինաստանին սարսափի մէջ է ձգել. մ[illegible]թէ հէնց նոյն իսկ Եւրոպայում վերառած, Պրուսիայի յաղթութիւնը Աւստրիային, Դանիային և Պաղպիային՝ այդ զօրութեամբը չեղաւ. այդպիսի մ[illegible]թէներ շատ կարելի է բերել, բայց բերածներն բաւական են ցոյց տալու համար, որ գիտութիւնը զօրութիւն է և դիւթական զօրութիւն: Այս փոքր յառաջաբանից յետոյ բերենք այստեղ պրօֆէսոր Զուպրովի յետագայ դասախօսութիւն „Լուսաւորութեան դերը տնտեսական կեանքի մէջ“, որ տպուած էր „Րուսկի կուրիէր“ լրագրում: Այդ նշանաւոր դասախօսութեան մէջ յայտնուած միտքը՝ ինչպէս նախադրուշացումն մեզ համար ունի շատ մեծ նշանակութիւն. նորա եզրակացութիւնը այն է, որ ազգերի յառաջադիմութեան հետ զուգահեռաբար ընթանում է և նորա նիւթական հարստութիւնը. ասել է թէ ոը ազգերը յառաջադէմ են, անդ նոցա նիւթական ոյժը մեծ է:

Ահա այդ դասախօսութեան թարգմանութիւնը.

„Պրօֆ. դասախօսութիւնը բաժանված էր երկու մասի. առաջին մասնում նա քննադատում էր տեսլետիկաբար այն դրութիւնը՝ թէ գիտութեան զարգացումն համարելու է գլխաւոր գործիչ (факторъ) տնտեսական յառաջադիմութեան. երկրորդ մասնում այդ դրութիւնը լուսաբանում է՝ համեմատելով Անգղիային, Ամերիկային և Գերմանիային Ռուսաստանի հետ: Որպէս զի բացատրենք գիտութեան դերը տնտեսական կեանքում՝ շարունակում է պրօֆ. — նախ և առաջ պէտք է վճռենք թէ ինչումն է երևում մարդուս դերը ազգային տնտեսութեան մէջ: Գիտութիւնը յաջող տնտեսական յառաջադիմութեան գլխաւոր պայմանը համարում է նպատակայարմար ներգործութեան անհրաժեշտութիւնը բնութեան զօրութեան վերայ: Դորա համար հարկաւոր միջոցն է ծանօթանալ բնութեան մասնաւոր զօրութեանց հետ: „Մարդուս իշխանութիւնը երբի վերայ ասում է Բէկոնը (Novum Organon) – հիմնվում է գիտութեան և արուեստի օգնութեամբ: Կոնտի ֆորմուլան յայտնում է յետագան գիտութեան և արուեստի վերաբերեալ. „գիտութիւնից ծագումն նախատեսութիւն, վերջինից գործնդութիւն:“ Տնտեսական կեանքում կարող են մէզ ասել՝ կարող են միայն տեխնիկական գիտութիւնները գործնդութիւն ունենալ և այսպիսով լինել պատճառ տնտեսական յառաջադիմութեան: Բայց այդ կարծիքը ճիշտ չէ: Տեխնիկական գիտութիւնները հետևանք են մարդկային ուրիշ գիտութեանց: Վերցնենք շոգիի գործնդումն արդիւնաբերութեանց մշակութեան և ծանրութեանց տեղափոխութեան մէջ, որն յարուցել է կատարեալ յեղափոխութիւն տնտեսական կեանքում (Այժմ Անգղիան վայելում է 7 մ[illegible]իոն շոգիական զօրութիւն (паров. сила), որոնք հաւասար են՝ հաշուելով ամեն մէկ զօրութիւնը հաւասար 12 մարդի ոյժի՝ 80 մ[illegible]իոն ձրի մարդկանց զօրութիւն): Բայց այդ գործնդութիւնը շոգիի կարելի է եղել յետ բնագիտութեան յայտնի զարգացման:

Եթէ գիտութեան աճումն ծառայում է ինչպէս ստեղծագործական զօրութիւն տնտեսական յառաջադիմութեան համար, ապա ուրեմն գիտութեան տարածելն ամբոխի մէջ (масса), պէտք է համարուի գլխաւոր խնդիր տէրութեան: Բաւական չէ՝ որ նշանաւոր գիւտերն ծանօթ են մասնագէտներին. հարկաւոր է՝ որ նոքա ազգին ամբոխի աշխատանաց յաջողութեան վերայ: Ցայժմ արդիւնամշակութեան (промышл.) յառաջադիմութիւնը եղել է ինչպէս հետևանք անգիտակցական հետևողութեան օրինակների. Գերմանիան՝ զօրօրինակ՝ իւր արդիւնամշակութեան յառաջադիմութեամբ Պաղպեացւոց բողոքականներին, որոնք Նանկդի եդմեկից յետոյ գաղթել են Գերմանիայ: Մասնաւոր փոքր արդիւնամշակութիւնները (кустарн. промышленность) Մոսկվայի նահանգի վարգացել են Պաղպեացւոց Մոսկվայի աւերմունքից յետոյ, երբ բոլոր արհեստաւորները գաղթել են գիւղօրայք: Բայց տեխնիկական գիտութեանց օրինակների միջոցաւ դանդաղ տարածմանը պիտի փոխարինէ նոցա մասնագիտութիւնը: Այն գիտութիւնը, որն հիւսնի աշակերտը կարող է ստանալ 10 տարուայ մէջոցում, նա կարող է սովորել մէկ տասնեակ դասով:

Սրանից հասկանալի է՝ թէ ինչ աստիճան արևմտեան եւրոպական տէրութիւնները հոգում են տեխնիկական ուսումնարանների զարգացման և մասնագիտական լրացուցիչ դասարանների ժողովրդական ուսումնարաններում մտցնելու համար: Բայց աշխատելու է՝ որ տեխնիկական գիտութիւնը հիմնվի ընդհանուր զարգացման վերայ: Սկզբնական ուսումնարանը պէտք է յարուցանէ աշակերտի մէջ հետաքրքրու-

Թիւն և նորան ընդունակ դարձնէ տեխնիկական գիտութեանց ըմբռնելուն: Այժմ ժողովրդական լուսաւորութեան կարիքը աւելի է՝ քան էր առաջ: Միջազգային փոխանակութեան (обмѣнъ) ընդլայնմամբ մասնաւոր տնտեսականութիւնք սերտ կապված են միջազգային շուկաներին հետ (рынокъ): Այն երկրներին՝ որոնք յետադէմ են իւր տնտեսական զարգացմամբ, մեծ երկիւղ է սպառնում տնտեսական տարկանութեան մէջ ձգվելուց:

Որպէս զի կարողանանք ցոյց տալ մեր տեօրետիկական դաստղութիւնների ճշմարտութիւնը՝ վերցնենք գիտելիք (данныя) զուգահեռական զարգացման ժողովրդական լուսաւորութիւն և տնտեսական յառաջադիմութիւն երեք ամենայառաջադէմ տերութեանց մէջ. Անգղ. միաց. Նահանգներում և Վերմանիայում:

Փօքսաների օրէնքը ընդունելով սկզբնական ուսումն Անգղ. սաացել է մեծ ընդարձակութիւն. 67 Թուականում Անգղ. տարօրում էր 1,300,000 երեխայ. 82 Թուականում արդէն այդ Թիւը հասել է 4,200,000. Այդպէսով 15 տարուայ ժամանակամիջոցում ուսանողաց Թիւը եռապատկել է: Այժմ ուսանողաց Թիւը հասել է ամենաբարձր սահմանին (maximum) հազարին 160. Համարեա ամենը ուսումնարանական հասակում: Ընդմէջին զուգահեռաբար աւելացել է և տերութեան ծախքը ուսումնարանաց վերայ. 72 Թուականին այդ ծախքը 2 միլիոն ֆունթ ստերլինգ էր. 82 Թուականին մինչև $5^1/_2$ միլ. ֆ. ստ.՝ ասել է Թէ՝ մէջին հաշուով՝ 2 մանկէթ ամեն մէկ բնակչի վերայ: Միևնոյնը տեսնում ենք և Վերմանիայում, ուր 82 Թուականին եղել է 7 միլիոն ուսանող՝ ասել է Թէ՝ հազարին 157 ուսանող: Միացեալ նահանգներում հազար բնակչին ընկնում է 190 ուսանող: Մէջին ծախսը ամեն մէկ բնակչէ ուսումնարանաց վերայ հասնում է 4 մանկէթ: Անգղ. 50 Թուականներում նրանց անունը ձեռք քաշողների Թիւը հասնում էր 30% արական. ս. և 40% իգական. ս. 80 Թ. 14% ար. և 18% իգ.: Վերմանիայում համարեա անգրագէտ չկայ: Զինուորագրութեան ժամանակ Խաղիայում եղել են անգրագէտք 47%, Զուիցերիայում 3%. Պրուսիայում 1%, Վերաֆմբերգ ոչ մէկը չի եղել անգրագէտ:

Այդ երեք տերութեանց մէջ նկատւում է և ամենամեծ աճումն ազգային հարստութեան: Անգղ. ազգ. եկամուտը 43 Թուակ. հաւասար էր 250 միլ. ֆ. ստ. 82 Թուականին 565 միլ. ֆ. ստերլ., այնպէս որ եկամուտը աճել է մինչև 125%, իսկ ազգաբնակութիւնը մինչև 60%: Գլխաւոր պատճառը այդ հարստութեան ժողովրդական լուսաւորութեան մեծ զարգացումն է: Միացեալ նահանգներում 50 Թուակ. ազգային հարստութիւնը հասնում էր 7 միլիարդ դոլլարի. 80 Թուակ. 43 միլիարդի, բայց աւելի լայն զարգացումն արդիւնագործութեան նկատւում է Վերմանիայում, որն մեծ նահանգ է չարուցանում իւր դրացիների մէջ: 40 Թուականին նորա արդիւնագործութիւնը կատարեալ կախման մէջ էր Անգղիայից. բայց այժմ նա առաջին տեղն է գրաւում արդիւնագործութեան մէջ: Պրուսիայում նորա առևտրական շրջանը վեց անգամ աւելացել է այս վերջին տասն տարում: Դատնալով դէպի մեր Հայրենիքին նորագոյն տեղեկութեանց դնալով մեզ մօտ ուսումնասիրութեան հատկում եղողներից միայն $^1/_{16}$ է ուսանում աշակերտների Թիւը՝ հազարին ընկնում է 15. սակայն Թէ 4 անգամ պակաս Սաքսոնիայից, Նեպտ պատոից և Մեկլենբուրգից: Այնպէս էլ սակաւ է մեր ծախքը ժողովրդական ուսումնարանաց վերայ. նա հասնում է $4^1/_2$ միլիոն մանկէթի. այդքան էլ ծախսում է Հալտինքը (Зѣмство). միայն սակաւ էլ քաղաքները. այնպէս որ մէկ բնակչին ընկնում է 10 կոպէկ: Երբ Պրուսիայում մէջին առաջիկը ուսուցչին հասւածը է 550 մանկէթի, մեզ մօտ 15% ստանում է 100-ից պակաս, 40%—150-ից պակաս, 30% մինչև 200: Այստեղից ակնյայտնի է մեր անգրագիտութիւնը: Մինչև անգամ մայրաքաղաքներում, ուր զետեղուած է զարգացեալ ազգաբնակութիւնը՝ անգրագիտութիւնը շատ մեծ է: Պետերբուրգ անգրագիտները 33% ար. իգակ 48%, Մոսկվայ 43 ար. և 66 իգ.: Զինուորագրութիւնից երևում է՝ որ 80% անգրագէտ են:

Մեր ազգային եկամուտը մենք միայն կարող ենք կըշռել հացաբոյսի քանակութեամբ. պաշտօնական ստատիստիկային նայած 70 Թուակ. եղել է 170 միլիոն չետվերտ. 78-ին. 176, նոյնանման Թույլ յառաջադիմութեան և արդիւնագործութեան մէջ: Ցոյց տալու համար Թէ մինչ ստատիստան Թույլ է մեր արդիւնագործութիւնը կարող է ծառայել այն, որ մեր հարստային նահանգները ստիպուած են հազարաւոր վերստ հեռու կեդրոններ ուղարկել իրանց արտադրութիւնը (произведеніе) սրտերից պէտք է ստանան մշակուած ձևում: Մեր ֆաբրիկանները գետեղուել են անանտառ տեղերում, մինչ որ Դոնի կողմերում, ուր անտպատելի վառանելիք կայ, մինչև անգամ չնչին սկսուած չ'կայ (зачатокъ) արդիւնամըշակութեան: Բայց մեզ մօտ զորա պատճառը որոնում են մեր հասարակական պայմանների անկայունութեան մէջ, բայց այդ պայմանները բացատրւում են մեծ աստիճանով մեր տգիտութեամբ: Միակ մէջոցը մարտնչելու աղքատութեան դէմ աշխատանքի արդիւնաբերութիւն է: Ասում են՝ Թէ մեզ մօտ չեն գտնում գործ այն անձինք, որոնք ստացել են բարձրագոյն ուսումն. բժիշկները, տեխնիկները, գիւղատնտեսները և այլն, և դորանից եզրակացնում են, որ մեր մէջ կարիք չկայ ուսումն առաջներն մէջ: Ապա ինչպէս է որ Գերմանի. իւր 25 հազար ուսանողներին, Ամերիկան իւր 60 հազարի համար գտնում է տեղ, իսկ մենք մեր միայն 7 հազար ուսանողաց համար տեղ չունենք: Պատճառն ոչ Թէ այն է, որ կարիք չկայ, այլ նա է, որ չենք ղգում այդ կարիքը. մինչև կարելի է ասել՝ գիւղացին մէջից չունի պահելու բժշկին, երբ նա հարիւր անգամ աւելի է կորցնում մնալով առանց բժշկի օգնութեան: Պատրաստուած մարդը ամեն մի ազդեցութեան մէջ կարող է տատնապատել արդիւնաբերութիւնը և բարձրացնել արժէքը իւր պատրաստած իրերին: Վերջերումս Ռուսաստանը մտել է միջազգային փոխանակութեան մէջ. կամայ ակամայ մենք պէտք է մրցենք օտար երկրների հետ. միշտ չ'պէտք է մենք մեզ կիսատական պարապով պատենք հովանաւորական տարիւով: Ռուսաստանը կամ պէտք է հասնի ուրիշ երկրներին արդիւնաշահութեան մէջ, որի համար անհնարինպատակայնորմամբ մէջոցն է ընդարձակ զարգացումն ժողովրդական լուսաւորութեան՝ կամ պէտք է տնտեսական կախումն ունենայ այն տերութիւններից, որոնք մեզանից առաջ սկսել են տարածել ուսումն ամբոխի մէջ":

Համարեա միևնոյն միտքն է յայտնում և République Française լրագիրը մշակների կրճատի վերաբերմամբ Գաղղիայում, պատճառաբանելով որ Ֆրանսիան լուսաւորութեան կողմանէ չետ նայ դրացիներից: Այժմ եթէ որ արդիւնագործութիւնը չունի առաջուան ընդարձակութիւնը, դորա պատճառը այն է, որ լուսաւորեալ Գերմանի. նորան գերազանցել է իւր գիտութեամբ՝ ընդհանրացնելով լուսաւորութիւնը ազգի բարձրամտութեան մէջ. գործարով և հասկ դնելով և նորա արդիւնագործական տալանդը: Ինչ պէտք է տալած մեզ համար. տգիտութ պէտք է ինչպէս մեր ճաճ-

կատանի և Հնդկաստանի եղբարք, որոնք երբեմն ունեցել են ահագին կարողութիւն՝ տգիտութեան պատճառաւ՝ անկարող լինինք մրցել լուսաւորեալ վաճառականաց հետ: Մինչև այժմ մեր բռնած ընթացքը՝ մեր վաճառականաց, արհեստաւորաց, գիւղականաց մտաւոր ոյժը ՚ի նկատի առեալ, պէտք է տխուր ապագային սպառնար. քանի որ մինչև այժմ մեր մէջ բարձր զարգացումն աւելորդ քան է համարվում վաճառականի համար և այդ է պատճառը, որ մենք համարեա մէկը չունինք բարձր ուսումն ստացած, որ վաճառականութեամբը և արդիւնագործութեամբ պարապի: Եթէ կ'ըմբռնենք այն գաղափարը, որ լուսաւորութիւնը ոյժ է և առանց այդ ոյժին մեզ անկարելի է մրցել օտար ազգերի հետ. եթէ չ'հասկանանք, որ մեր ապահովութիւնը և բարեկեցութիւնը մեր երկրի արդիւնագործութեամբ կապող է լինել, եթէ միայն աշխատենք գիտութիւնը տարածել մեր մէջ՝ մոռնալով ընդ ամին արհեստագիտական, գիւղատնտեսական և վաճառական գիտելիք, մեր դրութիւնը յաջողակ չի կարելի համարել: Դեռ ուշ չենք, եթէ թողնենք մեր անհոգութիւնը և անտարբերութիւնը և մտաբերելով մեր երբեմն մելիսնատոր հնդկահեղբարց անկման պատճառը և զննուենք այն զէնքով, որով յաղթում է լուսաւորեալը տգետին ամեն դէպքում և մտնենք համարձակ և աներկիւղ ամեն մեզ մօտ եկւորի հետ ՚ի մրցումն հաւասար դրով, որ յաղթանակն մեր կողմն կարող է լինել, քանի որ մենք ունինք այն առաւելութիւնը, որ ծանօթ ենք մեր երկրին, սովոր կլիմային և այլն:

Բ. Ա.

Օ Յ Ի Ն Բ Ա Զ Ո Ւ Թ Ի Ւ Ն

(Հազար ու մի գիշերուայ առակներից թարգմանութիւն)

(Շարունակութիւն „Մեղու Հայոցի" 1883 թ. № 56 բանաստեղծից)

Մ ա ս ն Ա.

ԳԼՈՒԽ Զ. ՀԻՆ ՄԵՂՔԵՐԻՑ

«... Այլև. եօթնից յանցանաք՝ մահացու մեղաք...:
«Քանզի...»

.... Դեռ քանի մի ժամ կար մինչև մութը, որ հեղեղանման անձրևը դադարեց և հովիզոնը սկսեց մաքրուել արագութեամբ մի կողմ վազող թուխ ամպերից: Զով էր օդը և արեգական գեղաճիճաղ Ճառագայթները ամպերի միջից մերթ մերթ ցոլելով՝ ծիածանի սիրուն կամար էին կազմում դիմացի արևելքում: Երկինքը կատես թէ հաշտութիւն էր խոստանում մեղաւոր երկրին, որ միայն գիտէ պատսպարել Ղովմի հայրենակիցներին:

Խորհրդաւոր էր բնութեան այդ հրաշալի տեսարանը, բայց աւելի մեծախորհուրդ էին այն մտքերը և չիշողութիւնները, որ երկնքում վազող ամպերի արագութեամբ միմեանց ետևից անցնում էին մի ըստրի գլխին տիտիկ արած փոքրահասակ Նիհաք կենդանւոյ գլխում: Դա մեզ քաջ ծանօթ բոստ Մեր Աղուէսիկն էր, որ սովորական օրսի դուրս եկած ժամանակ անձրևից բռնուել էր, և այժմ իւր գրջուած կողքերը արեգակի դիմաց չորացնում էր: Նորա սիրտը դաձեալ հալի քարձիկ էր ուղում, բայց մտեներալ առաջնիակ գիւղին վտանգաւոր էր և անկարելի: Աւելի չարմար համարելով չ'տատանել իւր ցանկութեան կատարումը մինչ մթնանալը, Մեր Աղուէսը չար նախանձով դիտում էր հեռուից այն իւր թշնամի կենդանիներին, որոնք գիւղի պաշտպաններն էին տեսակ տեսակ գաղաններն դէմ:

„... Որքան անկրաւ է աշխարհքը, մտածում էր Աղուէսը, ահա թշնամիքս հաւաձագերով լիքը գիւղում աձակ համարձակ շրջում են և դեռ նոցա պաշտպան էլ են հանդիսանում, իսկ ինձ հալածում են և քշում: Այս չէ՞ միթէ զաչագութիւն և անիչաւութիւն: Ինչպէս, չարուեստ նախում էր Աղուէսը, երկուշաբաթ առաջ երեքշաբթի օրը (յատուկ չիշում եմ) գիւղի պաշտպան այդ բարեկամներս ինձ գիւղի մի խրճիթից չանկարծական մահուամբ մեռած հրատարակեցին և հինգշաբթի օրն էլ թազման օր նշանակեցին—երևի նոյն օրն և իմ քելեխն էլ անուշ արին, հոգոց թաման էլ կոնծեցին, ինչն որ կերան ու խմեցին, երանց անույշ լինի, միայն Տէր մեռուցանէ և Տէր կեցուցանէ չը չիշեցին: Ես կենդանի եմ և, ըստ սովորականին, իմ բարեկամներիս ժպտում եմ: Այս էլ մի տեսակ գաչաղուէիւն է, աւելի ճիշդը քաղքի հանաք է...“

—Ի՞նչ ես մտածում, Աղուէս եղբայր, ձայն հանեց չանկաձած մի չաղաչ (ճագար), որ կամաց կամաց մօտենում էր նորան:

„ Վերջին ժամանակները, պատասխանեց ակ քաշելով „ Մեր Աղուէսը, գաչաղների մասին լրագիրները բաւական „ շատ խօսեցին ու գրեցին, դատեցին ու վճիռները տուին, „ նոցա ծագման պատճառները որոնեցին, անցեալը քրքրե„ ցին և հոգեբանութեան զօռ տուին: Ես էլ գործնական „ կեանքի մէջ հետազոտում եմ թէ ոմվ է գաչաղը:...“:

—Նախ և առաջ—դուն, ընդհատեց ժպտալով չաղալը, որ, ինչպէս երևում էր, շատ ի մօտոյ ծանօթ էր Աղուէսիկս անցեալին:

„ Ե՞ս, վիրաւորուած կերպիւ հարցրեց Մեր Աղուէսը: „ Ես երեսուն տարի խեղճութեամբ գործել եմ, ոչ մուրացել „ եմ, ոչ խնդրել. իմ խիղճը և երախտագիտական զգացմունք „ քը, որ ներկայիս համար չնմարութիւն է, ինձ զեկավար է „ եղել: Դոհ եմ եղել իմ քնջով ու պատառ հացով, որ ե„ րեսի քրտնքով վաստակել եմ...:

—Գուցէ հաւատայի ասածներիդ, պատասխանեց չաղալը, եթէ շատ լաւ չը ճանաչէի քեզ, բարեկամ: Միտք է, երբ այս երկիրը նոր եկած ժամանակներդ լեռան ստորոտումն էիր բնակվում: Մանրամասնօրէն գիտեմ, թէ որպիսի անօրինութեամբ ես վարվել այն բոլոր հաւաքներում, ուր որ դրուել է ոտքդ: Երեսուն տարի գործելես, կարծելով թէ գործքերիդ պահարակելի կողմը ոչ ոք չէ տեսնում: Գործել ես խեղճութեամբ, որովհետև փարթամութեամբ գործելու ոչ շնորհք ունէիր, ոչ խելք, ոչ ընդունակութիւն, ոչ գիտութիւն և պատրաստութիւն: Չես մուրացել և խնդրել, բայց աղուէսութեամբ քարշ ես եկել, ուր որ Համեղ կերակուր ես հոտոտացել: Քեզ պահել և կերակրել են տարիներով, կարծելով թէ վանդակի մէջ գաղանական կրքերդ մոռացման պիտի տային, բայց դու չաղ հաւ ձագի քարչկիկը ձեռքից չես թողել, ուր որ դիպել է դունդդ: Խղճ ու երախ-

տագիտական զգացմունք ես չառաջ բերում, բայց դու այդ երկուսովն էլ լաւ պատժեցիր մարդկանց . . . :

» Ի՞նչպէս« հարցրեց այլայլուած Աղուէսը:

—Այնպէս, պատասխանեց գլուխը քորելով չաղալը, որ մարդիք հաւատացին քո »լսիզՃ« և »երախտագիտու- Թիւն« անուանեալ զգացմունքներին ու քեզ չանձնեցին մի ահագին հաւաքուն հարիւրատոր հաւաձագերով լիքը: Դու այնպիսի խաղ խաղացիր հաւաձագերի հետ, որ քեզ ցախաւելով դուրս քշեցին հաւաքնից . . . . :

» Ժամանակ կայ լռելոյ, մեղմ ու խղճալի ձայնով » սկսեց Ծեր Աղուէսը, ժամանակ կայ խօսելոյ: Ժամանակ » և հանդամանքները պատահում են մեր կեանքում, երբ » լռելը խոհեմութիւն է . . .«:

—Բայց քո լռելով, ինձ չես կարող լռացնել: Նա քեզ հետ հին հաշիւները էլ շատ ունի: Ջարդուիներդ ու պատաւելի խրատներդ քեզ պահիր: Ինձ բաւական է հանդէս բերել քո սառնիկ սէրը դէպի հաւի քաբչիկը . . . .

» Ի՞նչ ապացոյց, ո՞վ է վկայ . . . մոմոաց Ճարպահատեալ Աղուէսը . . . .

—Վկայ կամիս . . . : Ահա քեզ և . . .

Յանկարծ գիւղի կողմից վազող չորս հինգ շների հաչը ընդմիջեց այս վէճը ու թէ Ծեր Աղուէսը և թէ չաղալը մի առեսակ »ծաղապուրծ Ճողոպրեցալ« անհետացան բլրի գլխից:

ԳԼՈՒԽ Է· ՓԵՇԱԿԴ ԱՆԻՄՈՒԻ

. . . . . ԵԹԷ Աղուէսը մարգումը ձագեր է հանել—

. . . . . Մեր Թագու Հեզութիւնից է»

Ժողովրդական առած

—Առաւօտեան աղտամուխտին զգայլ քայլերով և գողէ գող բարձրանում էր պէպի պիւղը մի ոտուերը, որի ինչ լինելը և մերձենալը ոչ ոք ի հարկէ չէր նկատիլ, եթէ յանկարծ Տանուտիրոջ աքլորը չը վեր թռչէր գոմնանոցի վրայ ու իւր աղաղակով չը ղաղթացներ կալումը պառկած շներին: Մեծ գամփռը մոմոաց, բայց տեղից չը շարժեցաւ, իսկ շնիկները աչ ու ձախ ցրուեցին հաչալով, ոսկայն, սչնչ կատածելի բան չը գտած, շուտով վերադարձան կալը և մնացեանց հետ պար բռնեցին իրանց պապի առաջ թատրագլոր գալով: Գարձեալ Հանդարտութիւն էր տիրում գիւղի մէջ, երբ մարդի մօտից արագութեամբ թռաւ մի անորոշ ստուեր և աչքաբաց ագաղաղը նորից թափ տուեց իւր թեւերը ու աւելի ուժգին կերպիւ կանչելով՝ անհանգիստ արաւ գամփռի խաղաղութիւնը: Վերջինս ծոյլ ծոյլ վերկացաւ տեղիցը, յօրանջեց, Ճապկուց ու կամաց կամաց առաջ գնաց դէպի մարագը: Նորան հետևացին և շնիկները՝ պարով, հանդիսով: Աքլորը հպարտ հպարտ մի կողմը հետացաւ իւր այս ծառնօթներին Ճանապարհ տալու, և հետաքրքրութեամբ հրուրում էր թէ ինչ հետևանք պիտի ունենայ նորա հետազօտութիւնը: Բայց անցաւ ժամանակ, լոյսը քացուեց, գիւղը արթնցաւ, իսկ աքլորի աչքում երևցած կատածելի ոտուերի հետքը անգամ չկար: Գամփռը իւր երամով արդէն իջել էր ձորը՝ աղբիւրի մօտ, տաւարը գոմերից դուրս էին քշում ջրելու, Թռնիրներից ծուխը բարձրանում էր և ամեն տան մէջ սկսուել էր կեանք և շարժողութիւն, երբ հաւերին կուտ տուող հարսերից մէկը արագութեամբ դուրս վազեց մարագից՝ »պոչը կտրած աղուէսը ձուերս տարաւ, օգնեցէք« ազաղա-

կելով: Անմիջապէս երիտասարդները վազեցին դէպի մարագը որը Թիով, որը վայտով, որը քարով կամ կացնով զինուորուած, բայց մարագում բացի հաւաձագի շաղ ուսած արիւնոտ փետուրները ոչինչ չը գտան: Յանկարծ գիւղի միւս ծայրում նախրապան տղայքը Ճիչ հանեցին »տուր, տուր, տուր, աղուէսը, գող աղուէսը, սատկացուր, գլխին խփիր . . .« և մի քարէ կարկուտ տեղաց ձագագող կենդանու վերայ, բայց սա մահաւան վտանգի առաջ Թափեց իւր բոլոր սիժը և կիսամեռ ձագուկը բերանից վեր գցելով անենայն արագութեամբ վազեց դէպի լեռան գլուխը:

—Ինչպէս է որ այդ անիրաւը սովորութիւն է շինել մեր անմեղ հաւաձագերին փչացնելու և այսքան ժամանակ էլ անպատիժ է մնում . . . ասում էր նախրապաններից մէկը արիւնաթաթախ ձագուկը գետնից վերցնելով:

»Մեր շների անհոգութիւնն է մեղաւոր . . . բայց մի օր կը բռնուի և շատ վատ վախճան կունենայ« . . պատասխանեց միւսը ժպտալով:

—Վայ անիրաւ աղուէս, վայ, փեշակդ անիծուի . . . շարունակեց առաջինը և ամէնքը գնացին իւր գործին:

Իսկ հարուածները կերած ու քինէթ ու պռունգ ջարդած աղուէսը, երբ այնքան հեռացաւ գիւղից, որ իրան այլ ևս վտանգ չէր սպառնում, նստեց ամայի տեղում մի քարի վերայ և սկսեց առնալ ու վընկվընկալ՝—դուք գիւղացիքդ, ասում էր նա հայհոյելով, ձեր բարեկամը և Թշնամին չէք Ճանաչում, շներին ձեզ բարեկամ համարելով . . . ձեր մէջ հասարակական կարծիք չկայ, դա է բացակայ . . . ձեր շները են հսկայ, բայց ամօթ չկայ, ոչ էլ կարգ կանոն կայ, ես էլ անամայ, սարի գլուխն եկայ . . . :

Բայց ոտանաւոր ողբալու ժամանակը չէր: Ջարդ ու փշրը եղած կողքերը շատ էին ցաւ պատճառում բորոտ Ծեր Աղուէսին և նա քանի մի անգամ աչ ու ձախ նայելով մոմոաց իւր քթի տակ՝

»Ողորդ որ փեշակդ փեշակ չէ, Ճաշակդ—Ճաշակ, անէծուի այսպիսի կեանք . . .«

Ֆաջէքէրուն Ալեքսանդէ:

(Շատ կը շարունակուի).

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐ

Թռնէփէն սուլթ.—Թէ որքան ձեռնտու գործ է տաճկաց սուլթանի համար սուրճ պատրաստել, ապացուցանում է այն փաստը որ Մուստաֆա Հաջլին որ նուիրել էր իրան այս գործին Աբդուլ-Ազիզի օրով, Թողեց այժմ իւր մահկանացուն կնքելուց չետոյ իւր չորսամեայ զաւակին, քացի պանդաման տաճկական տոկոսաքեր Թղթերի, տարեկան 4800 լիրա ապահովուած եկամուտ: Դժուար չէ եզրակացնել Թէ ինչ է նստել հանգուցեալ սուլթանին ամեն մի Թաս սուրճը:

Խմբագիր-Հրատարակիչ ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Եկող դպրոցական շրջանին կարևոր է մի ուսուցիչ Երևանայ թեմ. Դպրանոցի համար Ռ. Պատմ. և Ռ. Աշխարհագ. ռուս լեզուով աւանդելու, իսկ ընդհ. պատմ. և Աշխարհագ. ու բնական պատմ. հայերէն լեզուով։ Այդ ամենից շաբաթական 24 դաս պիտի լինի՝ ս. է. և գ. դասարաններում։

Յանկացողք թող բարեհաճին իրանց պայմանների հետ յայտնել ինձ և այն թէ՝ ո՞ւր են աւարտած իրանց դասընթացը և թէ՝ յարդ ինչ պաշտօն են վարած։

Տեսուչ Ներ. թեմ. Դպր. Ս. Բէգ-Նազարեանց

Խոնարհաբար խնդրում եմ մեր միւս լրագրերի խմբագրութիւններից որ հաճին այս յայտարարութիւնը արտատպել և մի քանի անգամ հրատարակել իրանց թերթերի մէջ և։

Նոյնը

Ամենապատիւ Սրբազան Տեղակալի հրամանով առաջիկայ 1884—1885 ուսումնական տարուայ սկզբին Գէորգեան ճեմարանի վեցերորդ դասատան և առաջին լսարանի մէջ կընդունուին տասը տաս գիշերօթիկ աշակերտներ. իսկ միւս դասարաններում ի սպառ ընդունելութիւն չի լինի։

Այս մասին պատիւ ունիմ յայտնելու բոլոր խնդրատուներին Արարատ ամսագրի և միւս լրագիրների միջոցով։

Տեսուչ Ճեմարանի Ա. Նահապետեանց.

(3—1)

ԷԼԻ ՄԻԿ ԶՈՀ

ԿՕՄԵԴԻԱ ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԳՈՒՐԿԵԱՆՑԻ

Գինն է 1 րուբլի։

Վաճառվում է Թիֆլիզում ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ և ԿՈՎԿԱՍԵԱՆ գրավաճառանոցներում։

ՊԱՀԱՆԱՒՈՒՆԵԱՑ ՊԱՀԱՍՏԻ ԱՒԵՐԱԿՆԵՐԸ

Լուսատիպագրութեամբ տպագրուած, շրջանակի մէջ

դնելու, Գինն է 25 կ.

ՆՈՅՆԸ—այլ թղթի վերայ և մեծ

լուսանցքով 50 կ.

ԱՆԻՒ ԱՒԵՐԱԿՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Գառնասուն տեսարան, ստերեօսկոպի համար պատրաստած, գեղեցիկ պահարանի մէջ դետեղած,

Գինն է 20 Ր.

Վաճառվում է կենդրոնական գրավաճառանոցում։

(2—4)

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ ԾԱԽՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐՔԵՐԸ

Խանութի սեպհականութիւնք.

1. Աստուածաշունչ Զոհրաբեանի, չորս հատոր վենետիկ տպ. փառակազմ. . . . . 10— „ —
2. Աղօթատետր խպէտս մանկանց . . . . . „— 7—
3. Ղուկասեանց՝ Ընդհանուր պատմութիւն, հին դար. երկրորդ տիպ, փոփոխած և լրացրած . . . . . „—80—
4. Վենետիկի Մխիթարեանք . . . . . 1— „ —
5. Փայտաշէն խրճիթից մինչև սպիտակ տունը „—60—

Գումարով գնողներին 20% զեղչում։

Նոր հրատարակութիւնք՝

1. Տ. Տիւսաք՝ Մայտա, ժամանակակից վէպ . 1—50—
2. Կէօթէ՝ Հերման և Դորոթէա, վէպ . . . . 1—50—
3. Կոչլաեան՝ Բառգիրք գերմաներէն-հայերէն ա. տետր A. . . . . 1—25—
4. Աբասխանեանց՝ Դասախօսութիւններ, բ. տետր. . . . . „—40—

Նոյն տեղը՝

1. Առաքինութեան Ճանբան՝ կազմած . . 1—50—
2. Զաքրճեան՝ պատմութիւն հայոց, բ. տիպ, կազմած . . . . . 2—75—
3. Քնար-Հայկական, սակաւաթիւ, ... 2—50—
4. Անահիտ, հին ղրոյց . . . . . „—50—
5. Զեստէբտօնի ժառանգը, մանկ. վէպ . . . 1— „ —
6. Գէորգ Ռօլէստօն, վէպ . . . . . „—60—
7. Դօն-Քիշօտ Լամանչեցի . . . . . „—70—
8. Կոմբի խնամատարութիւն մանկանց . . . „—60—

(4—5)

ԱՒԵՏԱՓՔ ԱՆ

ԼՈՒՍԱՓՐԵՑ Յ. ՓԻՐՓԱՆԵԱՆ

Իշխանական և թագաւորական պալատների, ամրոցների, եկեղեցիների, մահարձանների . . . **40** *հատ ստերէօսկոպիկ լուսանկար տեսարան-ներ՝ նուրբ խնամքով պատրաստուած, ամփո-փուած գեղեցկաշէն պահարանի մէջ, Հայերէն, Ռուսերէն, գաղղիերէն և գերմաներէն բացատ-րութեան տետրակներով,* *)

ԱՐԺԷ 20 ՌՈՒԲԼԻ

Դիմել կենդրոնական գրավաճառանոց Թիֆլիսում

Ստերէօսկոպ պատկերները սովորական պատ-կերներից այն առաւելութիւնն ունին, որ տեսա-րանները աւելի բնական են ներկայացնում և այն-քան կենդանի տպաւորութեամբ, որ նայողին թը-ւում է թէ ինքը բուն իսկ տեսարանի մէջ է գտնւում:

Ուսումնարանները կարող են մաս առ մաս վճարել: 12 րուբլի սկզբում, իսկ մնացեալ 8 րուբլին 6 ամսուայ ընթացքում:

Անիի ստերէօսկոպ պատկերներից շատ քիչ օրինակներ են մնացել. ապակիները (նիգատիւ-ները) խոպան ոչնչացած են:

*) Հայերէն բացատրութեան տետրակը արտատպուած է «Արձագանք»-ի № 13 երկրի մէջ:

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

«ԱՂԲԻՒՐ» ԱՄՍԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

ՓԱՅՏԱԲԷՆ ԽՐԱԽՏԻՑ

ՄԻՆ ՉԵԻ

ՍՊԻՏԱԿ ՏՈՒՆԸ

(ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ)

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների երբեմն նախագահ Ջէմս Հարֆիլդի կենսագրութիւնը:

ԳԻՆԸ **60** ԿՈՊԵԿ Է.

Ծախվում է „Աղբիւրի“ համբագրատանը և կենդրոնական գրավաճառանոցում:

ՄԱՐՍԷՑԼԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆՆ

ՈՒԼԻՍ ՊԻԼԱ ԵԻ ԸՆԿ.

Պատիւ ունի յայտնելու իւր թղթակիցներին և առևտրական դասակարգին, բացի Թիֆլիսից, Նուխում, Շուշում, Պարսկաստանում և այն ամեն քաղաքներում, ուր կարելի կ'լինի ունենալ առևտրական յարաբերութիւն Ֆրանսիայի գլխաւորապէս Մարսէլլի Լիոնի Փարիզի հետ, ավանս է տալիս ապրանաց վերայ 50-էց 80% և 6% տոկոսեօք:

Իսկ յիշեալ Ֆրանսիական քաղաքներից ապրանք կամեցողներն կարող են բերել տալ նոյն տան միջոցաւ, փողն Թիֆլիսում վճարելու պայմանով: Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դիմել Բաղդասար Քալանթարեանցին այս հասցէով՝ Эриванская площадь № 14 домъ Кедхудова.

(2—2)

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

Ս. Մ. ՄԱՆՈՒԿԼԵԱՆԻ

„ԶԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ“

ՆՈՒԻՐ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻՆ

ԱՄԵՆՆ.ՀԱՐԿԱՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ *ամեն տեսակ վաճառականների, ռեղանաւորների, խանութպանների, գործարանատէրերի, հաշուապահների, գործակալների և գործակատարների, և ընդհանրապէս ամեն մեկ առևտրական ու դրամական գործեր ունեցող անձի համար:*

ՄԱՏՉԵԼԻ ՁԵՌՆԱՐԿ *ու դիւրըմբռնելի մեկնութիւն իւրաքանչիւր անձի համար, որ կամենում է ուսումնասիրել առևտրական գործողութիւնները ու հաշուարարութիւնները, առանց ուսուցչի օգնութեանը դիմելու:*

ՏՈԿՈՍՆԵՐԻ ԱՂԻՒՍԱԿՆԵՐ. 2%-էց մինչև 12%, մեկ օրից մինչև 860 օր և մեկից մինչև 10,000 ման. դրամագլխի համար:

ՋԱՓԵՐԻ ՓՈԽԱԴՐԱՄԱՆ ԱՂԻՒՍԱԿՆԵՐ. *դոցա միջոցով կարելի է հեշտութեամբ, ճիշտ և արագ, Անգլիայի, Ամերիկայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Աւստրիայի, Հոլլանդիայի և Զուիցերիայի ծանրութեան ու երկարութեան չափերը ռուսական չափերի դարձնել և հակառակը:*

Եւրոպական տերութիւնների դրամների, երկարութեան, ծանրութեան, հեղուկների և ընդեղէնների չափերի աղիւսակներ:

Զանազան տեսակ հաշիւների օրինակներ ու ձևեր հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն լեզուներով:

Վաճառվում է կենդրոնականդրա վաճառանոցում, պ. Եփրեմ Յատսերեանցի լամպային մաղազինում, Երևանց Յովհաննէսների առևտրական տան դրասենեակում և Հեղինակի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են այս հասցէով՝

Въ Тифлисъ, Сололакская ул. домъ Карганова. учредителю „Коммерческихъ Курсовъ“ Степану Манузьянцу.

Գինն է **2** *ռուբլի (սակաւաթիւ տպուած):*

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է
Թիֆլիզում Հայ գրավաճառների մօտ

ՇԻԼԼԵՐԻ

ԶԱՆԳԱԿԻ ԵՐԳ

Թարգ. ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑԻ գինը 20 կոպ.

Գրքի պահեստը գտնուում է կենդրոնական գրավաճառանոցում, ուր պիտի դիմեն օտարաքաղաքացիք այս հասցէով. Въ Тифлисъ Центральная книжная торговля. *Ճանապարհածախք 4 կոպ., 10-ից աւելի գնողները ճանապարհածախք չեն վճարում:*

ԱՐԴԵՆ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԳԷՈՐԳ ԱՒՈՎԵԱՆԻ

ԳԻՆՆ Է 60 ԿՕՊԷԿ

Գումարով գնողներին զիջումն կը լինի: Ծախվում է առ այժմ Հրատարակչի մօտ— Ք. Ալովեանց— եղբ. Աբովեանցների Թղթավաճառանոցում սեփհական տանը:

(5—6)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ ԳՆԴԱՊԵՏ Գ. ՄԵԼԻՔ-ՀԱՅԿԱԶԵԱՆԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԴՐ. ԱԻ. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑԻ

«ՀՈՂԻ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ»

Որը կազմում է հեղինակի դաստիօսութիւնների հրատարակման երկրորդ տետրը:

Գինն է 40 կոպէկ կանխիկ վճարելի:

Դիմել կենդրոնական գրավաճառանոցը, Կովկասի գրավաճառանոցը և կամ հեղինակին հասցէով՝ Лабораторная ул., домъ № 5 Щуринова. *Նոյն տեղերում վաճառվում են հեղինակի աշխատասիրութիւնը*

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ԱԶԳԱԲՆԱԿԶԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Գինն է 40 կոպ.

Երկու գրքոյկների գինը միասին 80 կոպ:

ՍՏԱՅՈՒԵՑԱԻ

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Տ ի ր ի ն

ՍՐԲՈՒՀԻ ՏԻՒՍԱԲԻ

ժամանակակից վէպը՝

ՓԱՅՏԱ

Գինն է՝ Թիֆլիս՝ 1 ր.—50 կ.
Դրսի քաղաքներում 1 ,, —75 ,,

Սոյն աշխատասիրութիւնը շատ կողմերից արժանի է ընթերցող հասարակութեան ուշադրութեան: Կ. Պոլսի Հայ մամուլը ջերմութեամբ քննադատութեան է ենթարկում սորան: Կարծիքները թէև շատ տարբեր են, բայց և այնպէս անկասկած կարելի է ասել՝ որ բոլոր ընթերցողները գոհ կը մնան Հայ կնոջ այս բացառիկ ինքնուրոյն աշխատութիւնը կարդալով:

Дозв. Ценз. Тифлисъ, 23 Іюня 1884 г.
Типографія И. Мартиросіанца.